Կանայք ու կանանց իրավունքներն ինչ կապ ունեին առհասարակ այդ թեմայի հետ: Գուցե որպես կին հալածյալ՝ ցանկանում է արտագաղթել Հայաստանից, Եվրոպայում հալածված կանանց ընդունում են, կարող է դիմել եվրոպական կառույցներին եւ հեռանալ Հայաստանից, ինչ ասեմ: Իրականում՝ նա ասում է, հետո ստանում է պատասխան:

Կարդացեք՝ էջ 4

Երբ մարդիկ կհայտնվեն անելանելի վիճակում, օգնության կգա բարեկամ Ադրբեջանը՝ Հայաստանին օգնության կարգով գազ ու նավթ մատակարարելով, Թուրքիան էլ կսկսի հացահատիկ վաճառել: Բայց, ինչպես ամեն մի բարի գործ, նրանք էլ դրա դիմաց ինչ-որ բան կպահանջեն Հայաստանից, սկզբում՝ Սյունիքը, Գեղարքունիքը, հետո՝ Երեւանը:

Կարդացեք՝ էջ 5

Կոչ եմ անում իմ փաստաբան գործընկերներին՝ այս հարցերով զբաղվել: Պետք է շատ կտրուկ քայլերի դիմել, նախադեպեր ստեղծել: Պետք է ալգորիթմներ մշակենք, որպեսզի Քննչական կոմիտեին, դատախազությանը կարգի բերենք: Վաղն էլ կարող են իրենց մեղադրանք առաջադրել: Այդպես է. այսօր դու ես մեղադրանք առաջադրում, վաղը՝ քեզ:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 69 (4204), 29 ապրիլ, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

ՔՊ-ի ներսում միմյանց դեմ ատելության դոզան աննախադեպ չափերի է հասել: Ցուցակի հետին հորիզոնականներում հայտնված գործող պատգամավորները չեն կարողանում հաշտվել այն անարդարության հետ, որ տեղի ունեցավ ներկուսակցական ընտրությունների եւ ցուցակը կազմելու ժամանակ: Կարծում են, որ ոմանք ծանոթ-բարեկամ սկզբունքով խլեցին իրենց մանդատները: Հատկապես Արայիկ Հարությունյանի հետ ասոցացվող անձինք են եղել շահողները: Նրանցից մեկին՝ Դավիթ Դանիելյանին, ՔՊ վարչությունը հեռացրեց ցուցակից՝ ընտրողներին իր օգտին ուղղորդելու համար: Ասում են, որ 50-ում հայտնված Արագածոտնի փոխմարզպետ Միլադա Հովհաննիսյանն էլ եղբոր՝ վարչապետի աշխատակազմի աշխատակից Սուրեն Հովհաննիսյանի քարոզչությամբ է իր տեղը նվաճել, եղբայրն էլ ցուցակում 65-րդն է: ՔՊ-ականները նեղսրտած են՝ ինչո՞ւ պետք է հիմա «վիզ դնեն», որ Արայիկի մարդիկ պատգամավոր դառնան:

Ներ տեղեկություններով, Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստան» դաշինքը մեծ հանրահավաքի է նախապատրաստվում: Այն ծրագրում են հրավիրել մայիսի 8-ին՝ հունիսի 7-ի համապետական ընտրությունների նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկի օրը: Դաշինքից չեն պարզաբանում այս լուրը, սակայն, մեր տեղեկություններով, այս անգամ նախատեսում են հանրահավաքն անցկացնել ոչ թե Ազատության հրապարակում՝ Օպերայում, ինչպես ապրիլի 11-ին արեցին, այլ՝ Հանրապետության հրապարակում, որն ավելի մեծ է եւ տարողունակ: Նախընտրական քարոզարշավի հենց մեկնարկին «ուժեղները», փաստորեն, որոշել են ոչ հաճելի անակնկալ մատուցել, ինչպես իրենք են ասում, «փոքրիկ խմբակին» եւ հոգեբանական ճնշման ենթարկել առանց այն էլ վախեցած ՔՊ-ականներին:

Ուժային կառույցների մեր աղբյուրները հայտնում են, որ վերջին շաբաթներին նախընտրական «զտում» է սկսվել ՆԳ եւ պաշտպանության համակարգերում: Ովքեր թեկուզ հեռավոր բարեկամություն կամ մտերմություն ունեն ընդդիմադիր շրջանակների հետ, ազատվում են աշխատանքից՝ «այլեւս նպատակահարմար չենք գտնում համատեղ աշխատանքը» բացատրությամբ, հետո «չերեզներով» տեղեկացնում են, որ ընդդիմության հետ կապի պատճառով են հեռացրել: Ընդ որում՝ զավեշտն այն է, որ որոշ մարդկանց ազատել են, դիցուք, մի ընդդիմադիր բարեկամի պատճառով, որի հետ տվյալ աշխատողը վերջին անգամ, ասենք, 3-4 տարի առաջ է հանդիպել:

Անազնիվ պայքար

Այս ընտրություններն ավելի ու ավելի շատ են նմանվում մի մրցակցության, որտեղ ռինգ դուրս եկած բռնցքամարտիկներից մեկի ձեռքերը կապել են եւ ասում են՝ կռվեք, կամ՝ վազքի մրցույթին մասնակցողներից մեկի ոտքերն են կապել ու ասում են՝ տեսնենք ով շուտ կհասնի ֆինիշին: Անազնիվ մեթոդներով պայքար է հիշեցնում խորհրդարանական ընտրությունների այս փուլը: Իշխանությունը, օգտվելով հանրային միջոցներից կազմված պետական բյուջեից, ընտրակաշառքի դասական օրինակներ է ցուցադրում. կենսաթոշակների ու աշխատավարձերի բարձրացում, առողջապահության ապահովագրություն, տարբեր արտոնյալ վարկերի տրամադրում, տույժ-տուգանքների ներում: Եվ շահառուները չեն էլ գիտակցում, որ դա լավություն չէ, այլ մեր՝ բոլորիս վճարած հարկերից է արվում: Ընտրակաշառքի մյուս ձեւերն էլ վատը չեն՝ փառատոներ, համերգներ, ասֆալտ, մանկապարտեզներ: Նորից պետական բյուջեից կամ իշխանությանը կցված օլիգարխների մեկենասությամբ: Սրան զուգահեռ՝ նաեւ ստի, վախի ու շանտաժի մեթոդներն են գործի դրվել. ով դրսից եկավ ընտրելու, «Զվարթնոցում» կձերբակալվի, ինչը բացահայտ կեղծիք է եւ անիրականանալի: Մենք չընտրվենք՝ պատերազմ կլինի. նորից կեղծիք է եւ խաբեություն: Եվ ամենակարեւորը՝ Նիկոլ Փաշինյանի սիրելի գործիքն է լիարժեք աշխատում. բռնել, կալանավորել, քրեական գործեր հարուցել, նախընտրական փուլում ընդդիմության շարքերից կարեւոր դերակատարում ունեցող մարդկանց մեկուսացնել՝ ահուսարսափ տարածելով մյուսների շրջանում: Մի պարզ արտահայտությունը դարձնել քրեական հետապնդման պատճառ՝ իբրեւ թե բարեգործության արգելքը խախտելու համար: Իսկ այդ նույն ժամանակ «Իմ քայլը» հիմնադրամն անխոչընդոտ գործում է, եւ հիմնադրամի նախագահը՝ վարչապետի կինը, այդ մասին խոսողներին մեղադրում է իրեն խոշտանգելու մեջ:

Մայիսի 4-5-ին, ինչպես հայտնի է, Երեւանում կկայանա Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովը, որը նախատեսվում է անցկացնել Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Հայաստանի իշխանությունները՝ Եվրամիության ղեկավարության հետ միասին, խնդիր են դրել միջոցառումը վերածել հակառուսականության մարաթոնի: Արդեն հայտնի է, որ Հայաստան է ժամանելու Ուկրաինայի նախագահ Զելենսկին: Մեր տեղեկություններով, փնտրել, պեղել են բազում հակառուսական գործիչների եւ բոլորին հրավերներ ուղարկել: Բայց Ադրբեջանի եւ Թուրքիայի ղեկավարները, որոնց հետ Փաշինյանն իբր արդեն խաղաղություն է հաստատել, ըստ լուրերի, դեռեւս չեն հաստատել իրենց այցը, եւ հավանական է, որ կմերժեն հրավերը: Թեեւ չի բացառվում՝ դա էլ «չվնասելու» միտումով է արվում: Ընդդիմադիր շրջանակներն էլ չեն պատրաստվում ձեռքերը ծալած նստել՝ եվրոպական պատվիրակության՝ Հայաստանում գտնվելու օրերին զանգվածային ակցիաներ են ծրագրում:

ՇՏԱԲՆԵՐՈՒՄ ՄԵԾ ԹՎՈՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ ԵՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ

Հայտնի է, որ «Քաղպայմանագրի» նախընտրական մարզային շտաբների ղեկավարներ են նշանակվել մարզպետները: Որոշ տեղեկություններով՝ ՔՊ շտաբը նրանց անսահմանափակ հնարավորություններ է տվել, միայն թե կարողանան ձայն բերել իրենց ուժի համար: Օրինակ, մարզպետները շտաբային աշխատանքի են ընդունում տասնյակ աշխատողների՝ սեփական հայեցողությամբ եւ շատ բարձր աշխատավարձերով, որպեսզի այդ աշխատողները, որոնք իրականում դասական «տասովշչիկներ» են, կարողանան իրենց համայնքներում մարդկանց այս կամ այն կերպ շահագրգռելով՝ ընտրության տանել եւ ձայներ ապահովել իշխանությունների համար: Մեզ ասացին, որ մարզային շտաբների աշխատողների քանակը կոնկրետ ու սահմանափակ չէ՝ ամեն ինչ կախված է տվյալ մարզի, տեղանքի առանձնահատկություններից, հանրային տրամադրություններից: Մարզպետներն ընդամենը հաստիքացուցակ են ուղարկում կենտրոնական շտաբի պետ Արայիկ Հարությունյանին, որը հաստատում է կամ խմբագրումներ է անում, եւ, ըստ այդմ, համապատասխան ֆինանսավորում է տրամադրվում շտաբներին: Մի խոսքով, մարզպետների քեֆին քեֆ չի հասնի՝ եկել է մեծ «խոպանի» ու պղտոր ջրում ձուկ որսալու ժամանակը:

ՏԱԿՈՒՇ

2 ՏԱՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄ ՉԻ ԱՐՎՈՒՄ, ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽՈՍՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԻՑ

Ապրիլի 26-ին Նիկոլ Փաշինյանը Տավուշի մարզ այցելության ընթացքում պարբերաբար ուղիղ եթեր էր մտնում: Սարիգյուղ-Կիրանց հատվածում լայվ մտնելով՝ նա զբոսավարի ոճով ցուցադրում էր տեսարժան օբյեկտները՝ «հեղափոխությունից» հետո ասֆալտապատված ճանապարհները, պետական աջակցությամբ, վարկային ֆինանսավորմամբ 16 միլիոն եւ 21 միլիոն դրամ արժեքով կառուցված տները եւ այդ ամենը

ներկայացնում էր որպես իրենց մեծ նվաճում՝ ««Իրական Հայաստանի» գաղափարախոսության գործնական կիրառում»:

Պարզվեց, Նիկոլ Փաշինյանը, հավատարիմ իր բնավորությանը, այս անգամ էլ է բացահայտ սուտ խոսել. Ներքին Ծաղկավան գյուղից ավտոմեքենայով Կիրանց անցնելիս, նա ուղիղ եթերում հայտարարել է. «Նախկինում էս ճանապարհի այս հատվածով անցնելիս բոլորը լարվում էին, որովհետեւ ուղիղ նշանառության ներքո էին գտնվում»: Մինչդեռ այդ ճանապարհը 1990-ական թվականների երկրորդ կեսից երբեք ուղիղ նշանառության տակ չի գտնվել, այդտեղով երթեւեկողները երբեք չեն լարվել, ու դա բոլորը գիտեն: Սուտ է նաեւ Նիկոլ Փաշինյանի այն պնդումը, թե Իջեւանի սահմանագոտու այդ գյուղերը նախկինում եղել են հուսահատության եզրին, այդ պատճառով այդ գյուղերում տներ չեն կառուցվել, իսկ հիմա հարյուրավոր տներ են կառուցվում: Հիմա տներ են կառուցվում, որովհետեւ առանձնատների շինարարության համար պետական բյուջեից 16 կամ 21 միլիոն դրամ աջակցություն է տրամադրվում:

Ադրբեջանի պահանջով, սահմանազատման անվան տակ 2024 թվականին Կիրանցից շուրջ 15 հեկտար հողը, Կիրանց-Բերքաբեր հատվածում եւ Բերքաբեր գյուղի մոտ 30 տարի ամրացված դիրքերն ապօրինի, միակողմանի կերպով Ադրբեջանին հանձնելը Ն. Փաշինյանը լայվում ներկայացրել է որպես սեփական ռազմավարություն. «Եթե մենք 2024 թվականին քաղաքական կամք չցուցաբերեինք եւ, ի հեճուկս հասկանալի անհանգստությունների, խմորումների եւ անկայունության, հստակ մեր գծած ռազմավարությամբ չգնայինք, էսօր ինչ կլիներ էստեղ, իհարկե, բոլորովին ուրիշ հարց է»:

Փաշինյանը սահմանազատման թեմային անդրադարձել է նաեւ հաջորդ օրը՝ ապրիլի 27-ին, Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի կազմավորման օրվա առթիվ կազմակերպված միջոցառմանն իր ելույթում ասել է. «Ադրբեջանի հետ ունենք սահմանազատված եւ սահմանագծված 12 կիլոմետրանոց սահմանային հատված, որտեղ ծառայություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերը: Եվ սա նույնպես շատ կարեւոր եւ բացառիկ իրավիճակ է, եւ պիտի արձանագրեմ, որ այդ 12 կիլոմետրը Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանի թերեւս միակ հատվածն է, որտեղ Հայաստանի եւ Ադրբեջանի զինված ուժերի ներկայացուցիչները ծառայություն են իրականացնում առանց սաղավարտների, առանց զրահաբաճկոնների եւ ինքնաձիգների պահունակները ոչ թե ինքնաձիգների վրա, այլ պայուսակների մեջ դրած»: Նա նաեւ հավելել է. «Առաջիկայում, իհարկե, մենք կշարունակենք եւ ավարտին կհասցնենք տրամաբանական ժամկետներում Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատումը»:

2024 թվականից հետո, արդեն ուղիղ 2 տարի սահմանազատում չի կատարվում, իսկ Փաշինյանը հայտարարել է դրանք շարունակելու եւ տրամաբանական ժամկետում ավարտելու մասին: Նիկոլ Փաշինյանը 2020 թվականի պատերազմում պարտված ղեկավար է, որը չի կարող Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում նախաձեռնողի դիրքերից հանդես գալ, նա չի որոշում, թե երբ շարունակել, ինչպես ու որ հատվածից շարունակել, երբ ավարտել Ադրբեջանի հետ սահմանազատումը: Սոցիալական մեծ խնդիրներ, կոռուպցիայի մեծ ծավալներ ունեցող Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին, որպեսզի իր բնակչության ուշադրությունը երկրում տիրող սոցիալական բեւեռացումից, կոռուպցիայից, իրավական կամայականություններից շեղի, մշտապես հարկավոր է արտաքին թշնամի: Ադրբեջանի ղեկավարության համար այդպիսի հարմար թշնամի է Հայաստանը, որի կերպարը նրանք թեժ են պահում՝ անտեսելով բարեկամության եւ խաղաղության հաստատման խոստումներն ու պայմանավորվածությունները: Ուստի Ադրբեջանի ղեկավարության շահերից չի բխում Հայաստանի հետ արդար, կայուն խաղաղության, բարեկամության հաստատումը, ինչպես նաեւ՝ այդ գործընթացի շրջանակներում երկու երկրների միջեւ սահմանազատում կատարելն ու իր զորքը ՀՀ սուվերեն տարածքից դուրս բերելը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ՉԻ ՍԻՐՈՒՄ՝ ՆԱ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԹՇՆԱՄԻՆ Է

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն իր համար անցանկալի կադրերին ինչ-ինչ պատճառներով ազատում է աշխատանքից: 2025 թվականին նա աշխատանքից անհիմն ազատել է Սպիտակի պետական քոլեջի տնօրենի տեղակալ Հեղինե Պողոսյանին: Պողոսյանը դիմել է դատարան՝ նախկին աշխատանքում /պաշտոնում վերականգնվելու եւ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը՝ 06.09.2025 թվականից մինչեւ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը բռնագանձելու, իսկ նախկին աշխատանքում/պաշտոնում վերականգնվելու անհնարինության դեպքում՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հատուցում ստանալու պահանջով:

Դատարանը հայցը բավարարել է՝ անվավեր է ճանաչել կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 05.09.2025 թվականի «Սպիտակի պետական քոլեջ» պետական ոչ առեւտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Հեղինե Պողոսյանի լիազորությունները դադարեցնելու եւ պայմանագիրը լուծելու մասին հրամանը: Որոշել է պարտադրել ԿԳՄՍՆ-ին՝ Հեղինե Պողոսյանին վերականգնել նախկին աշխատանքում, 06.09.2025 թվականից բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը:

Գորիսի պետական քոլեջի նախկին տնօրեն Կարեն Լազարյանի հայցը՝ ընդդեմ Ժաննա Անդրեասյանի, դատարանը եւս բավարարել է, որոշել է պարտադրել ԿԳՄՍՆ-ին՝ Կարեն Լազարյանին նախկին աշխատանքում վերականգնել, վերականգնելու անհնարինության դեպքում վերջինիս օգտին պատասխանողից գանձել նրա միջին աշխատավարձի 12-ապատիկի չափով հատուցման գումար:

Կարեն Լազարյանը մեզ հետ զրույցում ասաց, որ նախարարի հրամանը եղել է ապօրինի, դատարանը բավարարել է իր հայցը. «Հանուն իրենց սրտի թեկնածուի, Ժաննան գնացել է այդ քայլին: Ժաննան հաշվարկել է, լավ էլ իմացել է, որ եթե մենք գնանք դատարան, հաստատ դատը շահելու ենք, բայց խնդիրն այստեղ այլ է. այժմ այդ քոլեջը չկա, լուծարվել է: Ժաննան մտածել է՝ կգնան դատարան, մեկ է՝ այդ քոլեջն էլ չկա, դրամական փոխհատուցումները կանենք, ու գործը կփակվի: Նախարար կոչվածը գնացել է ապօրինի գործողության: Նա երկրի թշնամիներից է, Ժաննա Անդրեասյանը մեր երկիրը չի ընդունում, չի սիրում, Ժաննա Անդրեասյանն ինչ կապ ունի, վերջիվերջո, այս երկրի հետ: Նա ոչ միայն օրենքներ է խախտում, այլեւ մեկ ուրիշ դատական գործում նույնիսկ իրավական փաստաթղթեր է կեղծում: Ժաննա Անդրեասյանն օտար է այս պետությանը, այս երկրին: Նա ընդամենը պարգեւավճար ստացող է: Ժաննան շուտով չի լինելու, բայց չգիտի, որ բազմաթիվ հայցեր կան իր նկատմամբ, մարդիկ չեն մոռանալու, մինչեւ վերջ գնալու են: Նա օտար է հայ ազգի համար, նա իր ժուլիկ դեմքով մեր օրենքները պղծում է, կեղծում է, եւ դա միայն կանեն օտարները: Քեզ նախարար են նշանակել, որ կառավարես ոլորտը, ոչ թե պղծես ու կեղծես օրենքները»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Փաշինյանն արտախորհրդարանականներին «իգնոր» է արել

2020 թվականի չարաբաստիկ պատերազմից հետո Նիկոլ Փաշինյանը հանդիպումների շարք սկսեց արտախորհրդարանական ուժերի հետ: Դա այն շրջանն էր, երբ ամբողջ հասարակությունը, բոլոր ինստիտուտներն ու կոլեկտիվները պահանջում էին նրա հրաժարականը, ամիսներով հանրահավաքներ էին ընթանում, ստորագրահավաքներ էին կազմակերպում: Եվ Նիկոլ Փաշինյանն ուզում էր ցույց տալ, որ ամբողջ հասարակությունը չի պահանջում իր հեռացումը, այլ կան մարդիկ եւ խմբեր, որոնք իր հետ են, եւ սկսեց հանդիպել մի շարք մարգինալ ուժերի ղեկավարների հետ: Ի սկզբանե ՀՀ վարչապետի եւ արտախորհրդարանական ուժերի հանդիպումների այդ ձեւաչափը կեղծ էր, արհեստական, ուներ ընդամենը քարոզչական ֆոն՝ ի հակադրություն խորհրդարանական ընդդիմության հետ լարված հարաբերությունների:

Այդ հանդիպումներին սովորաբար մասնակցում էին «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը, Հայաստանի քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցության նախագահ Լեւոն Շիրինյանը, «Միասնական հայրենիք» կուսակցության ղեկավար Միհր Տերտերյանը, Հայաստանի եվրոպական կուսակցության առաջնորդ Տիգրան Խզմալյանը, «Ուժը հայրենյաց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանը: Մի քանի անգամ ներկա են եղել ՔՈ կուսակցության նախագահ Սուրեն Սահակյանը, Նորիկ Նորիկյանը եւ Դավիթ Սանասարյանը: Սակայն գնալով նրանց շարքերը նոսրացան՝ սեղանի մոտ նստողների քանակը նվազեց: Վերջում մնացել էին Արամ Սարգսյանը, Տիգրան Խզմալյանն ու Լեւոն Շիրինյանը: Իսկ վերջին երկու տարին առհասարակ այլեւս այդ հանդիպումները չեն կայանում կամ կայանում են՝ չեն լուսաբանվում:

Նորիկ Նորիկյանից եւ Լեւոն Շիրինյանից հետաքրքրվեցինք՝ ինչո՞ւ այլեւս չեն հանդիպում Նիկոլ Փաշինյանի հետ, ճիշտ են վերջին անգամ հանդիպել: Նորիկյանը բարկացավ՝ հիշելով այդ հանդիպումների շարքը, եւ ասաց, որ վաղուց հանդիպում չի եղել. «Երեք տարուց ավել է՝ ես չեմ մասնակցել, նույնիսկ՝ չորս: Անիմաստ թեմա է սա, որի մասին իմաստ չկա ավել բան ասել»: Շիրինյանն էլ ասաց. «Վաղուց ենք հանդիպել, չեմ հիշում՝ երբ, բայց վաղուց էր»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Առաջին անգամ չեն խոսում Ջիլիզան հանձնելու մասին

Երեկ լուրեր էին շրջանառվում, որ հայ-վրացական սահմանի դելիմիտացիայի գործընթացի շրջանակներում Հայաստանը խոստացել է Վրաստանին հանձնել Լոռվա մարզի սահմանամերձ Ջիլիզա գյուղը: Վրացական մամուլում այդ մասին հրապարակումներ կային: Վրացական աղբյուրներն ասում են, որ իրենց սոցցանցերում մեծ ցնծություն է տիրում՝ 1991-ից հետո Վրաստանը միայն հող է կորցրել, իսկ հիմա առաջին անգամ՝ Փաշինյանի իշխանության շնորհիվ, հող է հետ բերում: Լուրերը շտապեց հերքել վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը՝ նշելով, որ դրանք մտացածին են, Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի որեւէ հատված որեւէ այլ երկրի փոխանցելու մտադրության, ծրագրի կամ պայմանավորվածության մասին որեւէ հայտարարություն, միտք կամ «տեղեկատվություն» չի կարող համապատասխանել իրականությանը: Մենք կապվեցինք Ջիլիզա համայնքի վարչական ղեկավար Միհեր Վարդանյանի հետ: Նա հայտնեց, որ այդ լուրերի մասին մամուլից է տեղեկացել. «Գյուղում նման խոսակցություններ չկան, գյուղատնտեսական տարին սկսվել է, սկսել ենք ակտիվ աշխատանքներ իրականացնել, իսկ նման լուրերից ես տեղյակ եմ այնքանով, որքանով որ դուք»: Նա նշեց, որ նախկինում էլ են նման խոսակցություններ եղել, այդ թեման պարբերաբար շրջանառվում է: Հարցին՝ իսկ սահմանազատման համար գյուղ որեւէ կառույցի ներկայացուցիչներ եկե՞լ են, Վարդանյանն արձագանքեց. «Ո՛չ մեր գյուղ են եկել, ո՛չ էլ այլ գյուղերից տեղեկություն ունեմ»: Նրա խոսքով, սպասվող ընտրություններին հայտ ներկայացրած քաղաքական ուժերի ներկայացուցիչներից էլ որեւէ մեկը գյուղ չի այցելել, չնայած համայնքային այցեր ունենում են: Անդրադառնալով դպրոցների միավորման մասին հարցին՝ Վարդանյանը նշեց, որ իրենց գյուղն ունի միջնակարգ դպրոց, որը փակվող դպրոցների ցանկում չկա: Այստեղ սովորում է 11 աշակերտ, գյուղն ունի 63 տնտեսություն:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԵՐԲԵՄՆԻ «ԴՈՒԽՈՎՆԵՐԸ» ՎԱԽԵՑԱԾ ԵՆ ԵՎ «ՍՏՐԱԽ ԵՆ ԳԱՆՅԱՏ ԱՆՈՒՄ»

«Խաղաղության» կարգախոսով ընտրարշավի մեջ մտած իշխող ՔՊ-ն իրականում ոչ թե նախընտրական քարոզչություն է անում, այլ չընտրվելու-չվերարտադրվելու մտքից սարսափած՝ սեփական ժողովրդին է շանտաժ անում, սպառնալիքներ հնչեցնում՝ հույս ունենալով, որ ժողովուրդն էլ վախի մթնոլորտում չի գնա ընտրության կամ կընտրի իրենց՝ պետության ճակատագիրը հարցականի տակ դնելով:

Սկզբում փորձեցին պատերազմի վախերն արթնացնել. «Եթե մեզ չընտրեք, սեպտեմբերին պատերազմ է լինելու»: Զուգահեռ, առաջ են քաշում թեզը, թե եթե Արցախից խոսեք, Արցախ վերադարձի հարցը բարձրացնեք, Արարատ սարն ու ցեղասպանությունը հիշեք, դա կհանգեցնի պատերազմի: Ապա, երբ հասկացան, որ մարդիկ կամ չեն վախենում, կամ հասկանում են, որ 4-5 պատերազմ բերած ուժն է պատերազմ բերում, անցան այլ թեմաների: Հիմա էլ փորձում են ընդդիմությանը վախեցնել, ընդդիմադիրներին աջակցողներին բռնել, հետ պահել պայքարից: Իսկ երեկ վախի մթնոլորտ ձեւավորելու, սեփական ժողովրդին ահաբեկելու նոր թեզ առաջ բերեցին: ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը սոցցանցի իր էջում տեսանյութ էր հրապարակել՝ արտերկրում բնակվող հայերին ուղղված սպառնալիքներով լի, թե՝ եթե ընտրակաշառք վերցնեն եւ գան ՀՀ ընտրություններին մասնակցելու, Հայաստան հասնելուն պես «Զվարթնոցում» կձերբակալվեն: Իբրեւ թե իրենք արտերկրում կարողանում են տեղեկատվություն հավաքել: «Ընտրակաշառք վերցնելը նույնպես հանցագործություն է, եւ մեր համապատասխան ծառայությունները ոչ միայն Հայաստանում են հետեւում իրավիճակին, այլ նաեւ՝ ՀՀ-ից դուրս»,- ակնհայտորեն ստում էր Ռուբինյանը, քանի որ մեր հատուկ ծառայություններն անգամ հայաստանյան ներքին իրավիճակին չեն տիրապետում, ուր մնաց՝ աշխարհով մեկ իրավիճակը վերահսկեն: Իհարկե, օրեր առաջ հենց Փաշինյանն էր հայտարարում, թե դրսից ժամանողներն իրենց են ձայն տալու, բայց անգամ դա չէ խնդիրը, այլ՝ այն, թե ինչպես են պարզելու՝ ով ինչու է ժամանում Հայաստան եւ փակ-գաղտնի քվեարկության ժամանակ ում է իր քվեն տալու:

Ակնհայտ է, որ իշխանությունը փորձում է շինծու «կաշառքի գործերով» ու վախի մթնոլորտով ճնշում գործադրել ոչ միայն հայաստանցիների, այլեւ սփյուռքում ապրող մեր հայրենակիցների վրա, որոնք երկքաղաքացիություն ունեն եւ անարգել կարող են ժամանել Հայաստան ու մասնակցել ընտրություններին: Հիշեցնենք, որ դեռեւս այս տարվա մարտի սկզբներին Արտաքին հետախուզության ծառայության միջոցով իշխանությունները դաշտ նետեցին ստահոդ լուրեր, թե հետախուզական տվյալներ են ստացել, որ այլ երկրում, հատուկ ծառայությունների անունից ինչ-որ անձինք Հայաստանի քաղաքացիների նկատմամբ ճնշումներ են գործադրում, որպեսզի վերջիններս հունիսի 7-ին Հայաստանում կայանալիք խորհրդարանական ընտրություններում «ֆինանսական եւ կազմակերպչական բնույթի հարցերով աջակցեն որոշ քաղաքական ուժերի եւ գան մասնակցեն ընտրություններին»: Փաշինյանն անձամբ անդրադարձել էր դրան՝ Գյումրիում, եւ վստահություն հայտնել, որ եկողների մեծ մասն իրենց օգտին է քվեարկելու: «Մոսկվայից եկել եք, որ մեր դեմ քվեարկեք: Բա տենց լուրեր են, ասում են՝ Մոսկվայից գան, Ռուսաստանից բերելու են մարդկանց, որ մեր ... չէ, չէ, սպասեք, չէ, չէ, ես, ընդհակառակը՝ ասում եմ՝ թող բերեն, որովհետեւ եկածների 84.5 տոկոսը, ընդեղ մեր արած հարցումների համաձայն, քվեարկելու է մեր օգտին: Լուրջ եմ ասում, չմտածեք՝ կատակ եմ անում, ամենայն լրջությամբ»,- ասել էր նա:

Ռուբինյանի երեկվա հայտարարությունից պարզ դարձավ նաեւ, որ իշխանությունը հույս չունի օրինական ճանապարհով վերընտրվելու, ուստի անցել է շանտաժի ու սպառնալիքների լեզվին:

Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Մայր Աթոռի Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ **Գեւորգ Դանիելյանը** հորդորում է չքննարկել, չանդրադառնալ իշխանության՝ դաշտ նետվող կեղծ օրակարգերին, այդ թվում՝ Ռուբինյանի վերջին հայտարարությանը: «Դա նշանակում է՝ մենք, հիմնական հարցերը թողած, իրենց գովազդով ենք զբաղվում, ես իրենց գովազդով չեմ ուզում զբաղվել, կներեք»,- ասաց նա՝ հրաժարվելով մեկնաբանել Ռուբինյանի հայտարարությունը: Արդարադատության նախկին նախարարն առավել քան վստահ է, որ նմանատիպ հայտարարություններն քաղաքացիների գերակշիռ մասն ուշադրություն չի դարձնելու. «Եթե նույնիսկ լինեն մարդիկ, որ ուշադրություն կդարձնեն, ուրեմն պետք չէ, որ այդ մարդիկ գան: Ի վերջո, եթե ես ուզում եմ, որ մարդիկ չվախենան, ոչ թե պետք է ասեմ այն, ինչ որ իրենք ասացին (ով չի լսել, ինձնից կիմանա), այլ իմ անձնական օրինակով, փաստերով ցույց տամ, որ պետք չէ վախենալ ոչ թե նրա համար, որ մեզ ոչինչ չի սպառնում, գուցեեւ սպառնա էլ, առանց դրա չի լինում, բայց եթե մենք ուզում ենք ինչ-որ լավ բան անել, այո, որոշակի զրկանքների էլ պիտի ենթարկվենք»:

Հարցրինք՝ հնարավո՞ր է կարողանան պարզել, որ մարդկանց արտերկրում կաշառք են բաժանել: «Դուք Հայաստանում եք, չէ՞, ապրում, եթե պետք է, ասում են՝ ստացել են, եթե պետք չէ, ասում են՝ չկա նման բան: Բայց սա էլ չէ խնդիրը, որովհետեւ ամեն ինչ էլ հնարավոր է, եթե հնարավոր է, ի՞նչ անենք, հանձնվե՞նք, ասենք՝ դե լավ, քանի որ դուք ամեն ինչի ընդունակ եք, ուրեմն ձեր դեմ խաղ չկա, վերջ, մենք հանձնվո՞ւմ ենք»:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ **Էդմոն Մարուքյանը**, մեզնից տեղեկանալով Ռուբինյանի հայտարարության մասին, տարակուսանք հայտնեց. «Ինչի՞ են վախենում՝ Փաշինյանն ասում էր՝ թող գան, մեկ է՝ մեզ են քվեարկելու»: «Ամերկբա է, զազրելի է ընտրակաշառքի բաժանումը եւ վերցնելը, դա չի քննարկվում մեզ համար: Իսկ գալ, քվեարկելը ցանկացած քաղաքացու իրավունքն է, ես կասեի՝ պարտականությունը, եւ ես հույս ունեմ, որ ՀՀ քաղաքացիները մինչեւ հունիսի 7-ը կգան Հայաստան, նաեւ ամառվա իրենց արձակուրդները կպլանավորեն այդ ժամանակաշրջանում, որ անպայման քվեարկությանը մասնակցեն»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՆԱ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ՄՏԵԼ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ

Նիկոլ Փաշինյանն իր էջում տեսանյութ է հրապարակել ՆԳ նախարար Արփինե Սարգսյանի մասնակցությամբ՝ ՀՀ նոր կենսաչափական անձնագրի մասին: «Նոր կենսաչափական անձնագիրն արտացոլում է մեր ինքնությունը, պատմամշակութային ժառանգությունը եւ պետականությունը»,- տեսանյութին կից՝ գրել է վարչապետը: Նոր նմուշի կենսաչափական անձնագրերը եւ նույնականացման քարտերը 2026-ի աշնանից կլինեն շրջանառության մեջ: Ներկայացրել են նոր կենսաչափական անձնագրի արտաքին տեսքը, այն դառնալու է կարմիր: Փաշինյանը նշել է, որ կարմիրը միջազգային պրակտիկայում ամենատարածված գույներից է:

ԱԺ նախկին պատգամավոր **Նաիրա Զոհրաբյանը** «Հրապարակի» հետ զրույցում ասում է. «Այս ամենը, ինչպես որ ես կարծում էի, կապված է վիզաների ազատականացման հետ: Իմ վերջին հանդիպման ժամանակ՝ Քյոլնում, տարբեր պաշտոնյաների հետ, ինձ վրա այնպիսի տպավորություն թողեց, որ Հայաստանում վիզաների ազատականացման հարցը լուծվելու է կայծակնային արագությամբ: Ինձ հասած տեղեկություններով՝ մինչեւ 2028 թվականը մենք ունենալու ենք վիզաների ազատականացման ռեժիմ, եթե որեւէ բան չխանգարի նախքան այդ: Ինչ վերաբերում է սիմվոլիկաների փոփոխությանը, Արարատ լեռան պատկերը հանելուն եւ այլն, այստեղ կա մեկ այլ կոմպոնենտ՝ վիզաների ազատականացումից զատ, առկա է նաեւ Նիկոլի հոգեբանական գործոնը: Նա անդադար խոսում է ինչ-որ չորրորդ հանրապետության մասին: Նա մրցավազքի մեջ է մտել Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Իր ընտանիքի անդամը անգամ «գիտնական ոջիլ» էր անվանել նրան: Քաղաքական սլենգում առաջին նախագահին ՀԱԿ-ի ներկայացուցիչներն անվանում են հիմնադիր նախագահ, ես տպավորություն ունեմ, որ եթե Նիկոլը վերընտրվեց, ապա չի լինելու այլեւս երրորդ հանրապետություն, իսկ չորրորդ հանրապետություն ասվածը պաշտոնապես լեգիտիմացվելու է՝ սահմանադրությամբ, Նիկոլ Փաշինյանն իրեն հռչակելու է չորրորդ հանրապետության հիմնադիր վարչապետ: Նրա ներկայացրած սիմվոլիկաները՝ հոգի, հավատք եւ այլն, լինելու են իր նոր հանրապետության ատրիբուտիկան: Նա ուզում է լինել ամեն ինչի կնքահայրն ու նախաստեղծը, այդ թվում՝ անձնագրի դիզայնի, գույնի եւ այլն: Նա անդադար ուզում է ինչ-որ մի բանով մնալ հայ ժողովրդի պատմության մեջ, սակայն իրականում մնացել է պատմության մեջ՝ տխրահռչակ ձեւով: Եթե նույնիսկ իրեն հաջողվի վերարտադրվել, իսկ նայելով ընդդիմության ոչ հաջող մարտավարությանը, կվերարտադրվի, իրեն հաջողվելու է գնալ դեպի չորրորդ հանրապետություն: Նա մի անգամ հարցրեց. «Այս թերմի՞նքն եք համարում հայրենիք»: Նա իր ամբիցիաների ու փառասիրության հարցն է լուծում, դրան էլ գումարած՝ վիզաների ազատականացման հարցը: ԵՄ-ն, որպես բոնուս, Հայաստանին ուզում է արագացված կերպով վիզաների ազատականացման հասցնել՝ ի հեճուկս Վրաստանի, որ կզրկենք ձեզ բոնուսից եւ այն կտանք Հայաստանին»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՃԻՃՈՒ-ՄԻՃՈՒ, ՈՉԻԼ, ԻՆՉ ԱՍԵՍ՝ ԲՈԼՈՐԻ ՄԱՍԻՆ ԱՍԵԼ Է, ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Է ՍԻՐԵՆ ԻՐԵՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Երկուշաբթի վարչապետի կինը՝ «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի տնօրեն Աննա Հակոբյանը, «հրատապ ասուլիս» էր հրավիրել՝ «Անկախ դիտորդ» դաշինքի կողմից ապրիլի 22-ին իր ղեկավարած հիմնադրամի դեմ Վարչական դատարան ներկայացված հայցադիմումի վերաբերյալ խոսելու: Ասուլիսի սկզբում Աննա Հակոբյանը հանդես եկավ հայտարարությամբ. ««Անկախ դիտորդը»...

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

- Աննա Հակոբյանն ասուլիսից առաջ հայտարարել է, որ պատասխանելու է բացառապես իրեն որպես «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի տնօրեն ուղղված հարցերին եւ Դանիել Իոաննիսյանի ներկայացրած հայցին վերաբերող հարցերին: Եթե նա պատրաստ չէ պատասխանելու բոլոր տեսակի հարցերին, եթե պատրաստ չէ լսելու քննադատական խոսք, այդ դեպքում ինչո՞ւ է ասուլիսով հանդես գալիս, այլ ոչ թե, օրինակ, հայտարարությամբ:

- Ճիճու-միճու, ոջիլ, ինչ ասես՝ բոլորի մասին ասել է, ինչո՞ւ պետք է մարդիկ սիրեն իրեն: Ի վերջո, եթե չես կարողանում քեզ տիրապետել, ապա մի արա ընդհանրապես հրապարակավ հայտարարություններ: Ամեն բան անում են հրապարակային, բայց կարող են, չէ՞, զսպել իրենց, նույն բաները խոսել նեղ շրջապատում, բայց ոչ թե դա անել տեսանյութերի կամ գրառումների տեսքով: Խորհուրդ կտամ՝ կատաղած ժամանակ մինչեւ տասը հաշվել՝ հետեւանքներից խուսափելու համար:

- Ամուսինն էլ ոչ պակաս տգեղ բառապաշար ունի:

- Դե, դրա համար ամուսնուն էլ չեն սիրում, ուղղակի տարբերությունն այն է, որ Աննա Հակոբյանն ավելի արտահայտիչ ձեւերով է գործում ու ավելի ցածր դիրքերից է «խփում», դրա համար էլ արժանանում է դրան: Նա, առհասարակ, լավ կանի՝ քիչ խոսի կամ ընդհանրապես չխոսի: Ուղղակի իրենց էությունից շոուն անպակաս խոշտանգում: Սակայն պարզ չէ, թե «ասոցացվել» ասելով ինքն ինչ նկատի ունի, եւ ինչպես կարող է Աննա Հակոբյանը չասոցացվել Նիկոլ Փաշինյանի, ՔՊ-ի եւ իշխանության հետ: Նախկին լրագրող Աննա Հակոբյանն ասուլիսի ընթացքում լրագրողների հետ նաեւ լեզվակռվի մեջ էր մտնում, փորձում վերջիններիս դասեր տալ, իսկ ասուլիսի սկզբում հայտարարեց, որ պատասխանելու է բացառապես իր համար նախընտրելի հարցերին: «Հրապարակը» զրուցել է «Չորրորդ իշխանություն» կայքի խմբագիր **Շողեր Մաթեւոսյանի** հետ:

- Անգամ Փաշինյանին համակրող մարդիկ երբեմն ասում են, որ ատում են նրա կնոջը: Ինչո՞ւ:

- Ճիճու-միճու, ոջիլ, ինչ ասես՝ բոլորի մասին ասել է, ինչո՞ւ պետք է մարդիկ սիրեն իրեն: Ի վերջո, եթե չես կարողանում քեզ տիրապետել, ապա մի արա ընդհանրապես հրապարակավ հայտարարություններ: Ամեն բան անում են հրապարակային, բայց կարող են, չէ՞, զսպել իրենց, նույն բաները խոսել նեղ շրջապատում, բայց ոչ թե դա անել տեսանյութերի կամ գրառումների տեսքով: Խորհուրդ կտամ՝ կատաղած ժամանակ մինչեւ տասը հաշվել՝ հետեւանքներից խուսափելու համար:

- Ամուսինն էլ ոչ պակաս տգեղ բառապաշար ունի:

- Դե, դրա համար ամուսնուն էլ չեն սիրում, ուղղակի տարբերությունն այն է, որ Աննա Հակոբյանն ավելի արտահայտիչ ձեւերով է գործում ու ավելի ցածր դիրքերից է «խփում», դրա համար էլ արժանանում է դրան: Նա, առհասարակ, լավ կանի՝ քիչ խոսի կամ ընդհանրապես չխոսի: Ուղղակի իրենց էությունից շոուն անպակաս քարոզչության ուղղակի փաստեր չի հայտնաբերել, սակայն հիմնադրամի բարեգործական ծրագրերն ու Աննա Հակոբյանի կերպարն ասոցացրել են իշխող քաղաքական ուժի հետ»: Ընտրությունների նախաշեմին Հակոբյանը որոշել էր հասարակությանը համոզել, որ ինքը Նիկոլ Փաշինյանի եւ «Քաղպայմանագիր» կուսակցության հետ չի ասոցացվում, ինքը ոչ մեկի օգտին քարոզչություն չի անում, եւ իր գործունեությունը քննարկելն ու Վարչական դատարան դիմելն իր իրավունքների ոտնահարում է, ոչ ավել, ոչ պակաս՝

- Նա ուղղակի պատրաստ չէր ասուլիսի: Պարզապես փորձում էր մեկ ուղերձ տեղ հասցնել, սակայն եղավ հակառակը: Նա խուսափեց խոսելուց, քանի որ վախեցավ, որ կարող է նորից ու նորից սխալվել:

- Իսկ ի՞նչ կասեք լրագրողների հանդեպ Հակոբյանի արհամարհական վերաբերմունքի մասին:

- Իրենք պարզապես խոցված են: Եղել է այն, որ եկել են սիրո մեջ, իսկ այժմ ատելությունը չեն կարողանում պարզապես ընդունել: Համընդհանուր սիրո եւ համընդհանուր ատելության շրջապտույտի մեջ են ընկել: Գիտելիք եւ ասելիք չունեն այս մարդիկ, ողջ խնդիրը սա է:

- Բայց լրագրողներին խորհուրդ տվեց կրթվել, ասաց, որ ինքն այժմ չինական փիլիսոփայություն է ուսումնասիրում եւ ցանկանում է թեզ պաշտպանել այդ թեմայով:

- Շատ լավ, որքանով ես եմ տեղյակ՝ չինական փիլիսոփայության մեջ խիստ կարեւորվում են զսպվածությունն ու իմաստնությունը եւ այլն: Չինական փիլիսոփայությունը լավ կանի՝ խոր ուսումնասիրի, եթե, իհարկե, ի վիճակի է:

- Աննա Հակոբյանն ասում է, որ իր իրավունքները՝ որպես կնոջ, ոտնահարվում են: Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս են իր իրավունքները ոտնահարում լրագրողները, թե՞ հակառակը՝ այդ իրենք են շատ կանանց իրավունքներ ոտնահարում:

- Կանայք ու կանանց իրավունքներն ի՞նչ կապ ունեին առհասարակ այդ թեմայի հետ: Գուցե որպես կին հալածյալ՝ ցանկանում է արտագաղթե՞լ Հայաստանից, Եվրոպայում հալածված կանանց ընդունում են, կարող է դիմել եվրոպական կառույցներին եւ հեռանալ Հայաստանից, ի՞նչ ասեմ: Իրականում՝ նա ասում է, հետո ստանում է պատասխան, բայց լրագրողներն այդտեղ ոչ մի կապ չունեն: Անգամ ինձ թվում է՝ նա ուզում է, որ իրեն որպես կին վիրավորեն, որպեսզի չխոսեն կոռուպցիայի եւ այլ երեւույթների մասին: Ամեն ինչ վերագրում է իր՝ կին լինելուն, փորձում է թեման խոցելի դարձնել, երեւալ խիստ ժամանակակից:

- Նա լրագրողներից մեկին խորհուրդ տվեց, օրինակ, «մուծվել» բառը չօգտագործել: Դուք ի՞նչ վատ բան եք տեսնում այդ բառի մեջ:

- Մուծվելը երբվանի՞ց է բառարանից դուրս ընկած բառ համարվում: Հավանաբար, որ իրեն մուծվում են, այդտեղ ենթատեքստ է տեսնում: Նա այդ ասուլիսով իզուր հանդես եկավ, քանի որ բացահայտեց իր բազմաթիվ վախերը:

- Ինչո՞ւ է իշխանական ընտանիքն այդքան ատում լրագրողներին:

- Դե, ինքն արդեն տիկին է: Տիկին է, էլի, ընդամենը տիկին, ու վերջ: Տիկիններով շրջափակված ենք:

ԿԱՐԾՈՒՄ ԵՄ՝ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՆՔ

Անна ՊԱՊԻԿՅԱՆ

Նիկոլ Փաշինյանը սոցցանցի իր էջում տեսանյութ է հրապարակել՝ ՆԳ նախարար Արփինե Սարգսյանի մասնակցությամբ, խոսելով ՀՀ նոր կենսաչափական անձնագրերի մասին: «ՀՀ նոր կենսաչափական անձնագիրն արտացոլում է մեր ինքնությունը, պատմամշակութային ժառանգությունը եւ պետականությունը»,- տեսանյութին կից գրել է վարչապետը: Նա նշել է, որ կթողարկվեն նոր նմուշի կենսաչափական անձնագրեր եւ կենսաչափական նույնականացման քարտեր, որոնք 2026-ի աշնանից կլինեն շրջանառության մեջ: Անդրադառնալով նոր անձնագրերին՝ ՆԳ նախարար Արփինե Սարգսյանն ասել է. «Այն ենթակառուցվածքը, որը 2022-ին հասանելի է եղել Հայաստանում, առհասարակ որեւէ աղերս չունի միջազգային ստանդարտի հետ: Մեր նպատակն է՝ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության՝ ICAO-ի 9303 ստանդարտին համապատասխան նոր փաստաթղթեր տրամադրել ՀՀ քաղաքացիներին: Սա նշանակում է, որ նորագույն տեխնոլոգիաներին համապատասխան են փաստաթղթերը, սահմաններին փոխճանաչելի են, որպեսզի մեր քաղաքացիներն ավելի արժանապատիվ կարողանան ճանապարհորդել»:

Նոր կենսաչափական անձնագիրը դառնալու է կարմիր՝ նախկին կապույտի փոխարեն, նման ռուսական, թուրքական, վրացական անձնագրերին: Ըստ Փաշինյանի՝ կարմիրը միջազգային պրակտիկայում ամենատարածված երանգներից է: Արդեն հրապարակվել են անձնագրի ներքին էջերը, որտեղ կարծես «ներկիր ինքդ» գրքի նկարազարդումներ լինեն, եւ, օրինակ, Խոր Վիրապի վանքը պատկերված է հակառակ կողմից, որ վանքի ֆոնին Արարատ սարը չերեւա:

Անձնագրային եւ վիզաների վարչության նախկին պետ **Հովհաննես Քոչարյանը** «Հրապարակ»-ի հետ զրույցում ասաց, որ անձնագրի շապիկի գույնի փոփոխությունը քաղաքացիներին ո՛չ առավելություն կտա, ո՛չ վնաս. «Թող փոխեն, ի՞նչ ասեմ, կոնկրետ անձնագրի գույնի փոփոխության մասով խորը չեզոք եմ: Ինչ վերաբերում է Արարատ լեռան պատկերը հանելուն, ապա ասեմ, որ ես բացարձակ սիմվոլներով չեմ հետաքրքրվում, պետությունն ինձ համար մնում է պետություն, ես վաղուց այդ տարիքից դուրս եմ եկել, պետությունն ինձ համար կազմակերպություն է, որը, կարծում եմ, կանգնած է անվտանգային լուրջ խնդիրների առջեւ, եւ լավ կլինի, որ մեր ուշադրությունն այդ ուղղությամբ սեւեռենք, ոչ թե սիմվոլիզմով զբաղվենք: Պատմությունը հիշելու լավագույն առիթը պատմությանն արժանի պետություն ունենալն է, մնացածը լիրիկա է: Հարգում եմ բոլորի կարծիքները, թող ժողովրդի կարծիքն էլ լսվի, ես արտահայտում եմ իմ կարծիքը: Ինձ համար սիմվոլիզմը պետական շինարարության եւ պետական իրավունքի մեջ ոչինչ է, ես կարծում եմ՝ պետք է ունենալ ամուր պետություն, մեր արյունոտ պատմությանը համարժեք պետություն, որպեսզի մեր թափած արյունը ո՛չ կրկնապատկվի, ո՛չ եռապատկվի, մեր սերունդներն ապրեն անվտանգ երկրում»:

- Այս իշխանության վերարտադրվելու պարագայում մեր սերունդներն անվտանգ պետությունում կապրե՞ն:

- Աստված գիտի:

- Հաշվի առնելով 8 տարվա հետագիծը՝ Ձեր կանխատեսումներն ինչպիսի՞ն են:

- Ապագայի վերաբերյալ իմ կանխատեսումները դրական չեն. բացասական ազդանշաններն ավելի շատ են: Ու ես կարծում եմ՝ մեր անվտանգային ռիսկերին համարժեք քաղաքականություն մենք չունենք, անհամարժեք վիճակում ենք՝ ռիսկերի հետ կապված:

- Մայիսի 28-ին ռազմական տեխնիկայի ցուցադրություն է լինելու, իսկ դա ազդեցություն կունենա՞ մարդկանց վրա:

- Ինձ վրա զրո ազդեցություն կունենա, շատերի վրա՝ դրական, ես կարծում եմ՝ ցուցադրականությամբ չէ, որ զինված ուժերի մարտունակության տպավորություն կարելի է ստանալ, ես ավելի խորը փորձագիտական եզրակացության կարիք ունեմ, ինձ ավելի հետաքրքրում է՝ այդ տեխնիկան կիրառողներ ունե՞նք, թե՞ չունենք՝ պրոֆեսիոնալ մակարդակի:

ԴԵՖԻՑԻՏ

ԳԱԶԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Հեղուկ գազի դեֆիցիտը եւ դրա անընդմեջ բարձրացող գինն այս օրերին դարձել են Հայաստանում ամենաշատ քննարկվող հարցերը: Ընդդիմադիրները եւ իշխանության հետ չկապված քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչներ հարց են բարձրացնում, թե ինչու իշխանությունը՝ էկոնոմիկայի նախարարը, Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը կամ որեւէ այլ պատասխանատու մեկը չի անդրադառնում մի հարցի, որը հուզում է տասնյակ, գուցե հարյուր հազարավոր մարդկանց, այդ թանկացումն ամեն օր մտնում է մարդկանց գրպանները եւ տանում հավելյալ գումար, մի՞թե պետությունը չի մտածում իր քաղաքացիների, նրանց աղքատացման մասին: Իշխանությունը շարունակում է լռություն պահպանել, որովհետեւ առանձնապես ասելու բան էլ չունի:

Հեղուկ գազը սկսեց թանկանալ ապրիլի սկզբից, այդ ժամանակ դրա գինը միջինում 170 դրամ էր՝ մեկ լիտրի համար, 15-20 օրվա ընթացքում դարձել է 270-300 դրամ, եթե, իհարկե, կա: Թանկացումը շոշափելի է այն աստիճան, որ գազն այլեւս չի ընկալվում որպես բենզինի էժան այլընտրանք: Հայաստանը գազ ներմուծում է Իրանից եւ Ռուսաստանի համար 16-20 հազար ռուբլու սահմաններում է, որը համարժեք է 80-100 հազար դրամի: Մեկ տոննա գազը մոտավորապես 2400 լիտր է, այսինքն, մեկ լիտրի մեծածախ գինը 30-40 դրամի սահմաններում է, որը, հասնելով Հայաստան, նախկինում վաճառվում էր 150-170 դրամով, իսկ հիմա՝ արդեն գրեթե 10 անգամ թանկ: Ռուսաստանում հեղուկ գազի պակաս էլ չկա, ավելին՝ ապրիլի 25-ից ուժի մեջ են մտնում ԵՄ-ի սահմանած նոր կարգավորումները, որոնք արգելում են ռուսական հեղուկ գազի ներմուծումը ԵՄ տարածք, նշանակում է՝ Ռուսաստանն ինքը պետք է շահագրգռված լիներ, որ իր ապրանքը գնորդ ունենա:

Քանի որ ներմուծման երկրում գազի պակաս եւ գնի աննախադեպ թանկացում չկա, նշանակում է՝ Հայաստանում դրա դեֆիցիտը տնտեսական պատճառ չունի, պատճառը, ամենայն հավանականությամբ, քաղաքական է: Ամենայն հավանականությամբ, քանի որ ռուսական իշխանության որեւէ ներկայացուցիչ պաշտոնապես չի հայտարարել, որ իրենք քաղաքական պատճառներով են խոչընդոտ ստեղծում Հայաստան հեղուկ գազի արտահանման համար: Ինչո՞ւ չի ասի, որովհետեւ պաշտոնապես Հայաստանը եւ Ռուսաստանը դաշնակից երկրներ են, գոնե՝ թե ինչ կլինի, եթե ընդհանրապես հարաբերություններն ամբողջ ծավալով սառեցվեն:

Գազի դեֆիցիտի եւ գնի աճի իրական պատճառի մասին չի հայտարարի նաեւ Հայաստանի իշխանությունը, օրինակ, էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը չի ասի, որ հեղուկ գազ Հայաստան ներմուծելու համար տնտեսական կամ տրանսպորտային ոչ մի խոչընդոտ չկա, Ռուսաստանի իշխանությունն արհեստական խոչընդոտ է ստեղծում, Հայաստանի եւ նրա սպառողների դեմ թշնամական քայլ է անում: Չի ասի, որովհետեւ Պապոյանի անմիջական վերադասը՝ Նիկոլ Փաշինյանը, հայ հասարակությանը համոզում է, որ Ռուսաստանի հետ հարաբերությունները փայլուն են, իրենք ոչ միայն խնդիր չունեն, որ Ռուսաստանի դեմ ոչ մի թշնամական քայլ չեն արել, չեն անում եւ ապագայում էլ չեն պատրաստվում անել: Հիմա եթե Պապոյանը հայտարարի, որ Ռուսաստանը հատուկ է փակել գազի արտահանումը Հայաստան, կստացվի, որ Ռուսաստանի հետ հարաբերությունները ոչ թե փայլուն են, այլ՝ թշնամական, կստացվի, որ Ռուսաստանը Հայաստանի դեմ նման թշնամական քայլ է անում՝ ի պատասխան Հայաստանի կողմից իրականացվող թշնամական քաղաքականության, որ Փաշինյանը, ինչպես միշտ, ստում է, իսկ դրանից տուժում են հարյուր հազարավոր մարդիկ:

Նույն տրամաբանությամբ, վաղը Ռուսաստանը կարող է փակել նաեւ խողովակաշարային գազի փականը, ցորենի, անասնակերի ու մյուս առաջին անհրաժեշտության ապրանքների արտահանման փականները, ու արդյունքում Հայաստանում տնտեսական կոլապս կսկսվի: Դրա համար գոնե մինչեւ ընտրություններ պետք է ձեւեր թափեն, ցույց տան, որ Ռուսաստանի հետ հարաբերությունները փայլուն են, ոչ մի խնդիր չկա: Ընտրություններից հետո, եթե հաջողացնեն կեղծիքով ու բռնությամբ պահել իշխանությունը, արդեն կասեն՝ այո, մեր անկախությունը պահանջում է, որ դուք աղքատ լինեք, հանուն անկախության դուք պետք է քիչ ուտեք՝ սոված մնաք, մեքենա էլ քիչ վարեք կամ չվարեք, տներն էլ չտաքացնեք, ցրտահարվեք: Ինչպես սոված, ցրտահարված եւ աղքատ մարդը չի կարող անկախ լինել, այնպես էլ երկիրը, դա հասկանում է նաեւ Փաշինյանը, բայց նրան հենց այդպիսի երկիր է պետք, որովհետեւ հարուստ եւ բարեկեցիկ հասարակությունը չի կարող հանդուրժել իր նման մեկին:

Երբ մարդիկ սովի ու ցրտի կմատնվեն եւ կհայտնվեն անելանելի վիճակում, օգնության կգա հարեւան եւ բարեկամ Ադրբեջանը, Հայաստանին օգնության կարգով գազ ու նավթ մատակարարելով, Թուրքիան էլ կբացի սահմանը եւ կսկսի հացահատիկ վաճառել: Բայց, ինչպես ամեն մի բարի գործ, նրանք էլ դրա դիմաց ինչ-որ բան կպահանջեն Հայաստանից, սկզբում՝ Սյունիքը, հետո՝ Գեղարքունիքը, հետո էլ՝ Երեւանը: Մի անգամ դա Փաշինյանի օգնությամբ արել են Արցախում, ինչո՞ւ նույնը չկրկնել Հայաստանի մնացած հատվածում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ԱՅԼԵՎՍ ՉԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ՄՆԱՑԵԼ Է ՄԻԱՅՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մասնակցել է «Հայաստանի գիտությունը՝ համաշխարհային հետազոտական տարածքում. մրցունակություն, գիտական գերազանցություն եւ գիտական արդյունքի իրացում տնտեսության մեջ» խորագրով կլոր սեղան-քննարկմանը:

Ողջունելով ներկաներին՝ նա շնորհակալություն է հայտնել քննարկումը կազմակերպելու համար, ընդգծել է նման քննարկումների կարեւորությունը՝ գիտության ոլորտի զարգացմանը միտված Կառավարության հետագա քաղաքականությունների մշակման գործում: «Կարծում եմ՝ ծրագրերի շուրջ քննարկումներ ունենալը, դրանք իրականացնելն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են, որովհետեւ ոլորտի ընթացիկ վիճակի զարգացումների եւ պատկերացումների մասին պետք է լինի մտքերի պարբերական փոխանակություն»,- ասել է նա եւ նշել, որ 2017 թվականի համեմատ 2025 թվականին գիտության ֆինանսավորումն ավելացել է շուրջ 2,8 անգամ՝ 185 տոկոսով, աշխատավարձերը բարձրացել են՝ ընդհուպ մինչեւ 300 տոկոս: Զրուցել է Ակադեմիայի կազմում գործող Լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանի հետ: Հիշեցնենք, որ մի շարք ինստիտուտներ, ինչպես նաեւ՝ Լեզվի ինստիտուտը, դուրս բերվեցին Ակադեմիայի կազմից եւ տեւական ժամանակ է՝ գործում են ԿԳՄՍ նախարարության ենթակայության տակ՝ Գիտության կոմիտեին են ենթարկվում:

Զրուցել ենք **Վիկտոր Կատվալյանի** հետ:

- Պարոն Կատվալյան, ներկա՞ էիք Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպմանը: Ի՞նչ տպավորություններ ունեք: Ինչի՞ մասին էր այդ հանդիպումը:

- Հանդիպումը գիտության զարգացման վերաբերյալ էր: Գիտությունների ազգային ակադեմիան այդպիսի շարք է սկսում, պետք է քննարկումներ լինեն, օրինակ, Գիտությունների ազգային ակադեմիայի դերի վերաբերյալ: Ակադեմիա ասվածում այլեւս չկան ինստիտուտները, խոսքը նախագահության մասին է.... նախագահության դերի մասին խոսվեց, հայագիտության զարգացման վերաբերյալ քննարկումների շարք պետք է լինի, դրա ուղիների եւ հեռանկարների մասին եւ այլն:

- Նիկոլ Փաշինյանի ժամանակ, նրա որոշմամբ, ինստիտուտները դուրս բերվեցին Ակադեմիայի կազմից: Ի՞նչ զարգացման մասին նա կարող է այժմ խոսել:

- Ինստիտուտներն այլեւս չեն ենթարկվում Ակադեմիային, այլ ենթարկվում են ԿԳՄՍ նախարարությանը: Ես եւս մասնակցում էի քննարկմանը: Սաղյանն իր զեկույցով հանդես եկավ, ներկայացրեց Ակադեմիայի ֆինանսավորման փոփոխությունների մասին, նոր նախաձեռնությունների մասին խոսվեց, հետո ելույթ ունեցավ Ալիխանյանի անվան ինստիտուտի տնօրենը, խոսեցին նվաճումների մասին եւ այլն: Վերջում էլ խոսեց Փաշինյանը:

- Ի՞նչ խոսեց: Ի դեպ, նախարարության ենթակայությամբ ինչպե՞ս է ձեր աշխատանքն ընթանում:

- Մենք այժմ ինչ-որ առումով սպասողական վիճակի մեջ ենք: Դեռեւս կանոնադրությունների փոփոխման շրջանն է, մենք մեր առաջարկություններն ենք ներկայացրել, կանոնադրական փոփոխություններից հետո նոր կհստակեցվի, թե ինչպես պետք է աշխատենք նախարարության հետ: Ամեն դեպքում, նախարարության հետ աշխատանքներ կատարվում են, իհարկե, ոչ նույն ինտենսիվությամբ, ինչ Ակադեմիայի հետ, հիմա ինստիտուտների հետ կապը մի տեսակ խզված է: Ակադեմիայի շրջանակներում հայագիտական, հասարակական գիտությունների ինստիտուտով համախումբ էինք աշխատում, միասին միջոցառումներ, քննարկումներ էինք կազմակերպում, բայց հիմա այդ կապն ինստիտուտների միջեւ խզվել է:

- Իսկ այս հարցերի մասին չբարձրաձայնեցի՞ք Նիկոլ Փաշինյանի մոտ:

- Չկար հնարավորություն: Հստակ ծրագիր կար, կային սահմանված ելույթներ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՕՐԵՆՔ

ՊԵՏՔ Է ԱԼԳՈՐԻԹՄՆԵՐ ՄՇԱԿԵՆՔ, ՈՐ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆԸ ԿԱՐԳԻ ԲԵՐԵՆՔ

«ՈՒԺԵՂ Հայաստան» կուսակցության անվտանգության հարցերով թիմի ղեկավար, լեգենդար հետախույզ Արթուր Ավանեսյանը՝ Կանդազը, երեկ կալանավորվեց 2 ամսով: Հակակոռուպցիոն կոմիտեն նրան բերման էր ենթարկել, ապա՝ ձերբակալել: Պատճառն ինչ-որ կոնտեքստից կտրված հերթական ձայնագրությունն է, որտեղ Կանդազն իր համերկրացիներին ասում է. «Համ գործն ա ինյան, համ հողն ա ինյան, համ տոնն ա ինյան»: Այսինքն՝ համ աշխատանք եք ունենալու, համ հող, համ տուն: Իրենք՝ իշխանության ներկայացուցիչները, 24/7 ռեժիմով խոստումներ են տալիս, ընտրակաշառք բաժանում, պետական բյուջեն դրա համար օգտագործելով, իսկ մարդու պարզ միտքը որպես բարեգործության արգելքի խախտում են դիտարկել ու նրան կալանք տվել: Երկուշաբթի օրը Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը, լրագրողների հետ զրույցում ասում էր, որ կարող է դրամահավաքներ ու բարեգործություն անել, պետք չէ իրեն «ասոցացնել» ՔՊ-ի ու Նիկոլի հետ, իսկ երբ ընդդիմադիր ուժին հարող կինը կարիքավոր տատիկին հեռուստացույց է ուզում նվիրել, դա հանցանք է համարվում, եւ 2 ամսական երեխա ունեցող կնոջը ձերբակալում են, պատերազմի հերոսին՝ կալանավորում: «Հրապարակը» զրուցել է փաստաբան **Հայկ Ալումյանի** հետ:

- Իշխանությունները թիրախավորել են «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչներին, անդամներին ձերբակալում են, խափանման միջոցներ կիրառում, երեկ էլ արցախցի հետախույզ Արթուր Ավանեսյանի՝ Կանդազի հերթն էր. ինչ-որ անհասկանալի ձայնագրության համար երկու ամսով կալանավորվեց:

- Ելակետային տվյալները շատ քիչ են իրականում, բայց եթե ներկայացված ձայնագրության բովանդակության համար են անձին տարել կալանքի, ապա այդտեղ հանցանքի տարրեր ես չտեսա, անգամ մեղադրանք առաջադրելու հիմքեր այդտեղ չկան, էլ չենք խոսում երկու ամսով կալանավորելու մասին: Բայց եթե անգամ մեղադրանք առաջադրելու հիմք էլ լիներ, ապա դա հիմք չէ՝ մարդուն կալանքի տանելու համար: Կալանավորման համար կան այլ հիմքեր: Եթե անձը մեղադրվում է ինչ-որ բանի համար, պարտադիր չէ, որ կալանավորվի: Անձին կալանավորում են միայն այն դեպքում, եթե անձը գործի քննությանը կարող է խանգարել, թաքնվել կամ այլ հանցանք կատարել, ինչպես նաեւ՝ եթե մյուս խափանման միջոցներն ի զորու չեն՝ վերոնշյալ վտանգները չեզոքացնելու: Հայաստանյան դատարաններն այս հարցում անդադար ձախողում են, այդ պատճառով էլ Եվրոպական դատարանը պարբերաբար վճիռներ է կայացնում Հայաստանի դեմ: Ստացվում է, որ հայաստանյան դատարաններում դա ամենատարածված խնդիրն է ու խախտումը, որ Եվրոպական դատարանը շարունակաբար արձանագրում է: Աննախադեպ քանակով կալանավորումներ են լինում՝ հիմքերի բացակայության առկայությամբ, ինչը բավականին լուրջ խնդիր է:

- Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ են այսքան շատ կալանավորում, հատկապես՝ քաղաքական գործերով:

- Դատական համակարգի խոցելի լինելն է այդ ամենի առաջին պատճառը: Քննիչը կարող է լինել ոչ պրոֆեսիոնալ կամ ինչ-որ մի տեղից հրահանգավորված՝ այս կամ այն բանն անելու համար, դատախազն էլ կարող է որոշակի դեպքերում լինել ճնշման տակ եւ գործել ազդեցությունների տակ՝ կատարելով գործադիրի հրահանգները, բայց դատարանները նրա համար են, որ քննիչի կամ դատախազի ոչ պրոֆեսիոնալ կամ կողմնակալ լինելը չհանգեցնեն անհիմն կալանավորումների: Դատարանն անձի իրավունքների ամենավերջին գիծն է, բայց մեր դատարանները դարձել են առաջին իրավունք խախտողները: Իհարկե, ես բոլոր դատավորներին նկատի չունեմ, ասեմ ավելին՝ կան դատավորներ համակարգում, որոնց մասին ամենաշռայլ գովեստի խոսքերն անգամ քիչ կլինեն, սակայն գերակշիռ մեծամասնությունը նրանց ճնշումների տակ է:

- Քննչական կոմիտեն ձայնագրություններ է հրապարակում, որոնք իշխանական լրատվամիջոցները՝ Հանրային հեռուստաընկերության գլխավորությամբ, ներկայացնում են որպես դատավճիռ, բացահայտ անտեսելով անմեղության կանխավարկածը: Երբեմն լսում ես այդ ձայնագրությունները, ռեպորտաժները, տպավորություն է, թե դատարանի վճիռ է հրապարակված, այլ ոչ թե հաղորդագրություն կամ մոնտաժված ձայնագրություն: Ինչպե՞ս կարելի է այս խնդիրը լուծել:

- Այստեղ անելիք ունեն փաստաբանները: Ես կոչ եմ անում փաստաբաններին՝ այս հարցով զբաղվել շատ ակտիվ: Մեր օրենսդրությունը ցույց է տալիս, որ նման իրավիճակներում, երբ քննչական ապարատը կամ դատախազությունը անմեղության կանխավարկածը խախտող հայտարարություններ են անում՝ նախաքննության ամենասկզբնական փուլում, ապա անձը կարող է դիմել դատարան եւ հասնել նրան, որ դատարանը վճռի, որ խախտվել է անմեղության կանխավարկածը, ինչի արդյունքում պետությունից կարող է բռնագանձվել մինչեւ երկու միլիոն դրամ գումար ոչ նյութական վնաս: Բայց ես շատ չգիտեմ նման գործեր, որոնք նման ընթացք են ունենում: Հարյուրավոր դեպքեր կան, երբ արվում են հայտարարություններ՝ խախտելով անձի անմեղության կանխավարկածը, բայց չնչին են դատական հայցերը, երբ այդ պատճառով ձեռնարկվի դատական գործընթաց:

- Ինչո՞ւ:

- Չգիտեմ: Ես կոչ եմ անում իմ փաստաբան գործընկերներին՝ այս հարցերով անպայման զբաղվել: Պետք է շատ կտրուկ քայլերի դիմել նման դեպքերում եւ նախադեպեր ստեղծել: Օրինակ, ես գործ գիտեմ՝ Սարգսյանն ընդդեմ ՀՀ-ի: Քննչական կոմիտեն հայտարարություն էր տարածել, որտեղ խախտվել էր անձի անմեղության կանխավարկածը, հայտնի ոճի մեջ, որ պարզվեց՝ Ռ. Ս.-ն, օգտագործելով այսինչը, կատարել է հետեւյալ արարքները եւ այլն, մարդը դիմել է դատարան՝ ներկայացնելով, որ խախտվել է իր անմեղության կանխավարկածը: Դատարանը վճռեց, որ իսկապես անձի անմեղության կանխավարկածը խախտվել է, եւ պետությունից գանձեց 500 հազար դրամ գումար՝ հօգուտ այդ անձի, դրան էլ գումարած՝ Քննչական կոմիտեին պարտավորեցրեց՝ հեռացնել այդ հրապարակումը: Այժմ եթե նորից է նման բան արվում, ապա վատ է, լավ բան չեն անում, բայց արդյո՞ք միայն իրենք լավ բան չեն անում: Պետք է բոլորով ալգորիթմներ մշակենք, որպեսզի Քննչական կոմիտեին, դատախազությանը կարգի բերենք: Այդպես չի կարելի՝ վաղն էլ կարող են իրենց մեղադրանք առաջադրել: Աշխարհն այդպես է. այսօր դու ես մեղադրանք առաջադրում, վաղը քեզ մեղադրանք կառաջադրեն:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ՀԻՆ ԵՐԵՎԱՆԸ» ԽՐՏՎԻԼԱԿ ՆԱԽԱԳԻԾ ԷՐ՝ ՆՊԱՏԱԿԸ ԼԵՎՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԷԳՈՆ ԲԱՎԱՐԱՐԵԼՆ ԷՐ

«Հրապարակը», սկսած 2010-15 թվականներից, պարբերաբար անդրադարձել է «Հին Երեւան» ճարտարապետական նախագծին: Բազմաթիվ հարցազրույցներ ենք արել նախագծի հեղինակ, ճարտարապետ Լեւոն Վարդանյանի հետ (ի դեպ, ՔՊ-ական պատգամավոր Ծովինար Վարդանյանի հորեղբայրն է), որը մեզ հավատացնում էր, որ մայրաքաղաքի քանդվող պատմամշակութային շենքերի քարերը հավաքում են մի տեղ, խնամքով պահում, որպեսզի շուտով քաղաքի կենտրոնում՝ Արամի փողոցի եւ Բուզանդի հատվածում, վերականգնեն այդ հին, սեւ շենքերը, ի մի բերեն՝ որպես Հին Երեւանի համալիր պատկեր: Մենք տեսնում էինք, որ հին թամանյանական արժեքավոր շենքերը բարբարոսաբար քանդվում են՝ տրակտորով: Հավանաբար, միայն Տերյան 11-ն էր բացառություն, այդ շենքերի քարերը դեսուդեն անխնամ թափված են, հայտնի չէ՝ դրանք ուր են տեղափոխվում եւ ինչքանով են պահպանվում: Մի խոսքով, վանդալիզմին բնորոշ պատմություններ էինք արձանագրում: Տարիներն անցնում են, իսկ այդ «շուտովը» կամ «հեսա-հեսան» ուշանում է, եւ կարծես մոռացվում են այն խոստումները, որ հին Երեւանը վերականգնվելու է: Ճարտարապետ **Սարհատ Պետրոսյանի** հետ զրուցեցինք՝ փորձելով հասկանալ, թե «Հին Երեւանի» ճակատագիրն ինչ եղավ՝ ո՞ղջ է, թե՞ արդեն տապանաքարին է գրված կամ դարձել է մի հին աշխարհամարտում զոհված անհայտ զինվորի գերեզման, որը մեզ ներկայացնում էին իբրեւ մայրաքաղաքի մշակութային ու ժամանցի մի չքնաղ տարածք, բայց ստացվեց մի անճոռնի բան, եւ դա էլ կիսատ մնաց:

««Հին Երեւանն» ի սկզբանե սխալ նախագիծ էր, դա ենթադրում էր ոչ միայն արդեն իսկ քանդված շենքերի քարերի չօգտագործում, այլեւ նոր շենքերի քանդում: Աֆրիկյանների շենքը քանդվել է «Հին Երեւան» նախագծով՝ Լեւոն Վարդանյանի անմիջական նախաձեռնությամբ, որը Երեւանի լավագույն շենքերից մեկն էր: Լեզվի ինստիտուտը քանդվել է Լեւոն Վարդանյանի անմիջական մասնակցությամբ: «Հին Երեւանը» հենց սկզբից խրտվիլակ նախագիծ էր եւ Երեւանի խրտվիլակը կառուցելու ցանկություն էր, որովհետեւ էն մի փոքր մասը, որ կառուցվել է, ծայրից ծայր կեղծ են շենքերը, ոչ մի հին քար չի օգտագործվել, եւ դա հին Երեւանի իմիտացիան է՝ ապակե գմբեթով կառուցված եւ այլն: Դա վկան է այն բանի, որ «Հին Երեւանն» ի սկզբանե ոչ խելամիտ, կեղծ Երեւան ստեղծելու նախագիծ էր, որի նպատակը բիզնես շահն էր եւ Լեւոն Վարդանյանի էգոն բավարարելը: Ուստի, ես ինչ-որ չափով ուրախ եմ, որ դա տեղի չի ունեցել, եւ հույս ունեմ, որ կգան այնպիսի ժամանակներ, երբ իշխանությունները կունենան այնպիսի խորհրդատուներ, որոնք կտան այն ճիշտ խորհուրդները, թե ինչպես կարելի է պահպանելով այդ տարածքում եղած պատմական շենքերը՝ վերադարձնել տարածքը քաղաքին եւ ամբողջականացնել Թամանյանի նախագիծը»,- ասում է Սարհատ Պետրոսյանը:

Իսկ մենք տեղում տեսնում ենք, որ տարածքը պահպանելու փոխարեն քանդել են Արամի տունը, միայն դրսի պատն է ցցուն մնացել, եւ փորել են շրջակայքը՝ խարխլելով Հեքեքյանի «Փոքրիկ երգիչների» շենքը, որ դարձել է քանդման ենթակա, եւ դատական գործ է հարուցված այդ բարբարոսության առիթով, բայց ոչ մեկը պատասխան չի տալիս, չնայած երկար ժամանակ ինքը՝ դիրիժոր Տիգրան Հեքեքյանը, բարձրացնում էր այդ հարցը, պայքարում: Հիմա այլեւս ոչ ոք չի խոսում այդ մասին: Կամ այն, որ քանդված շենքերի տեղում բարձրահարկ հյուրանոցներ ու բիզնես կենտրոններ են կառուցել՝ արտաքին պատի մեջ դնելով հին շենքից մի քանի քար՝ որպես կարկատան, բառի բուն իմաստով, դա ի՞նչ է՝ մխիթարանք, թե՞ ծաղր: «Սրանից 10 տարի առաջ Արամի տան շենքն ամբողջովին կար՝ իր ներքին մասով, հետո է քանդվել: Սա հանցագործ նախագիծ է, որ շարունակում է տեղի ունենալ աչքներիս առաջ, ինչպես «Փոքրիկ երգիչների» շենքը»: Իսկ Բուզանդի ավերակ հատվածն ի՞նչ է լինելու, գուցե մնալու է որպես քաղաքային սիմվո՞լ: «Քանի որ այդ բիզնես նախաձեռնության մեջ ներկայիս իշխանությունները թաթախված չեն, այլ հնուց եկած գործարքի արդյունք է, գուցե հետաքրքրությունն ավելի քիչ է»,- ասում է մեր զրուցակիցը:

Հուսիկ Արա

«Բարեւ, ես եմ». խորհրդային «հալոցքի» մասին

Խորհրդահայ կինոյի ամենահետաքրքրական գործերից մեկը Ֆրունզե Դովլաթյանի «Բարեւ, ես եմ»-ն է՝ նկարահանված «Հայկինո»-ում՝ 1965 թվականին: Այն պատմական հիշողության վերատեսության բարդ պրոցեսի, անձնական պատասխանատվության եւ գոյաբանական ընտրության մասին է, ստեղծվել ու էկրան է բարձրացել խորհրդային «հալոցքի» ժամանակներում՝ Նիկիտա Խրուշչովի բարենորոգումների շրջանում, երբ սովետական մշակույթում եւ արվեստում առաջին պլան սկսեցին գալ մարդն ու նրա ճակատագիրը եւ բարոյական դիլեմաների նկատմամբ վերաբերմունքը: Այդ շրջանում արվեստի գործերը, ներառյալ՝ նաեւ կինոն, ստեղծվում էին սոցռեալիզմի կանոններից նահանջելով դեպի ավելի բարդ ու հոգեբանական ձեւեր: Այս առումով «Բարեւ ես եմ»-ը ունիկալ գործ է, որը կարելի է դնել Փարաջանովի ֆիլմերի հետ նույն հարթության վրա:

Գլխավոր հերոսը գիտնական ֆիզիկոս Արտեմ Մանվելյանն է, որը կորուստ է ունեցել եւ վերադարձել անցյալի հիշողություններին: Կարեւոր է ժամանակի մոտիվը: Այսպես ասած, շարադրանքը միագիծ չէ, միահյուսվում են անցյալն ու ներկան, ստեղծում «հիշողության» բավականին ընդարձակ տարածք: Ֆիլմում առանցքային թեմաներից մեկն անձի հիշողությունն է: Հերոսն ապրում է անցյալի հետ մշտական երկխոսությամբ, հետպատերազմական սերնդի տրավմատիկ փորձառության վերամաստավորման առումով: Հաջորդիվ արդեն գալիս է մեկ այլ կարեւոր թեմա՝ գիտություն եւ մարդասիրություն, երբ գիտնական գլխավոր հերոսի միջոցով բարձրացվում է գիտական առաջընթացի եւ բարոյական պատասխանատվության հարցը: Ֆիլմն օտարված մարդու հոգեվիճակն է տալիս՝ Սարտրի եւ Քամյուի ոգով: Իր վիզուալ բնույթով՝ կինոնկարն ունի որոշակի պոետականություն եւ սիմվոլիզմ, ու դա կինոնկարին յուրահատուկ փայլ է հաղորդում: Կարեւոր է նաեւ երաժշտական ձեւավորումը՝ համապատասխան էմոցիոնալ միջավայր ու վիճակ ստեղծելու առումով: Ֆիլմը ներկայացվել է Կաննի մրցանակի եւ հիանալի փիլիսոփայական գործ է, որն անպայման դուր կգա լուրջ բովանդակություն ունեցող ֆիլմերի սիրահարներին:

Ո՞Վ Է ԵՐԲԵՎԷ ՏԵՍԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԾՈԾՐԱԿԸ

Երկարամյա մանկավարժ **Մկրտիչ (Ժորա) Դալալոյանը**, որը 2 երգիծապատում գրքույկների հեղինակ է, ցանկացավ ինձ ծանոթացնել իր նոր սատիրային, որտեղ նկարագրել է մութ անդրաշխարհը, ավելի ճիշտ՝ դրա կարեւոր հատվածներից մեկը՝ դժոխքը, որտեղ տերուտնօրինություն է անում, ոչ ավել, ոչ պակաս՝ ՀՀ ներկայիս վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նա դուրս է մղել դժոխքի «ուղեգիր» նվաճածներին տանջող, չարչարող բոլոր վերակացուներին, ինքը նստել «գլխավոր, գերագույն» վերակացուի թիկնաթոռին եւ ստանձնել այցելուներին դժոխային պատիժներ «սահմանելու» գործառույթը: Նա անխնա պատիժներ է նշանակում բոլորին՝ դժոխքի տարբեր պարունակներում «դարձի գալու» համար: Նրանցից յուրաքանչյուրը գործած հանցանքներին համապատասխան կրում է տանջանքի իր բաժինը: Չէ՞ որ իրենից՝ գլխավորից բացի, բոլորն են մեղավոր 2026թ. համապետական ընտրություններում կրած պարտության համար: Նա գլխավոր պատասխանատուն է, բայց՝ ոչ երբեք գլխավոր մեղավորը:

Մ. Դալալոյանին հարցրի՝ ինչո՞ւ է կարծում, որ ՔՊ խմբակի անդամները մոտ ապագայում «դժոխքի բնակիչներ» են դառնալու: Հասկանալով ակնարկս՝ նա խոստացավ իր հումորային պատումն անպես շտկել, որ դա հասկանալի լինի ընթերցողին: Ապա զրուցեցինք մեր կյանքի մասին:

«Ինչպե՞ս բնութագրենք մեր ժողովրդի այսօրվա վիճակը: Կաթի սերը երբ քաշում են, ի՞նչ է մնում տակը՝ անպետք շիճուկ: Մեր ազգային բոլոր արժեքները թիրախավորված են՝ Եկեղեցի, բանակ, տնտեսություն, մշակույթ, կրթություն, նոր սերունդ: Մեր աչքի առաջ մեր «սերը» մեր առջեւից քաշում-տանում՝ ցեխին են խառնում: Տագնապով հետեւում ենք, ոչինչ չենք ձեռնարկում: Ես մանկավարժ եմ: Գիտեմ, թե տարեցտարի ուր են գահավիժում այդ կարեւոր ոլորտի մեր նախկին ձեռքբերումները: Այդպես անապատի ավազն է ծածկում, ոչնչացնում ամեն ծառութուփ, ամեն ծաղկուն բան: Դասագրքեր, կրթության ցածր որակ, ազգային արժեքների նկատմամբ բացահայտ արհամարհանք: Լսեցինք՝ ծրագրված է հաջորդ տարի փակել 231 հանրակրթական դպրոց: Սա եղեռն չէ՞: Սողեսող մեզ մոտեցող: Դպրոցների մի մասը սահմանամերձ բնակավայրերում է: Ի՞նչ է նշանակում սահմանամերձ գյուղի դպրոցի փակումը: Նշանակում է՝ գյուղն ենք կորցնելու: Ո՞վ է ապրելու մեր գյուղերում: Եթե լսում ենք Ալիեւի ամենօրյա հայտարարությունները «Արեւմտյան Ադրբեջանի» մասին, հասկանում ենք, թե ինչ ծանրածանր խնդրի առջեւ ենք կանգնած: Երբեէ լսե՞լ ենք այդ պահանջների դեմ գոնե մեղմացված մի պատասխան: Չենք լսել, չենք էլ լսի: Այդ պարագայում ես իրավունք չունե՞մ եզրակացնելու, որ ամեն ինչ տեղի է ունենում ծրագրված, իշխանությունների բացահայտ խրախուսիչ թողտվությամբ: Ցավով տեղեկացանք՝ Արցախում վեց սուրբ եկեղեցիներ են ոչնչացվել: Չայն, ծպտուն չկա: Ինչո՞ւ ազերիները չպիտի ոգեւորվեն ու անցնեն Արցախի մնացած եկեղեցիների, մեր այլ սրբատեղիների ու հուշարձանների հոշոտմանը: Այնտեղ ծրագրավորված ոչնչացնում են այն, ինչը հայկական է, մեր երկրում էլ մեր իշխանություններն են նույնն անում՝ նույն հետեւողականությամբ: Չէ՞ որ ՔՊ-ն նախընտրական ծրագրերում անթաքույց հայտարարել է այդ մասին. նոր կառավարության ձեւավորումից հետո, եթե հաղթեն, կշարունակվի առավել կործանարար արշավը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ: Մտքիս մեջ մեխված է երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի մի լրջագույն մեղադրանքը, որ արել է Արցախյան 44-օրյա պատերազմում նախածրագրված ու պարտադրված պարտության մասին: Այն է՝ «5 միլիարդ դոլարի չափով կաշառքի փաստի մասին խոսակցությունները հենց այնպես չեն»: Երկրի վարչապետն ի՞նչ ասաց Հայոց ցեղասպանության 111-րդ տարելիցի կապակցությամբ. «Թուրքիայի դրոշի այրումը անտարակուսելի սադրանք է»: Ուզում եմ հարցնել՝ իսկ հայկական եկեղեցիների ոչնչացումը սիրո, հավատարմության ու խաղաղության ձոնե՞րգ է: «Նիկոլը երկրաշարժից մահաբեր է»,- գրել է Գյումրու ավագանու «Իմ հզոր համայնք» խմբակցության ղեկավար Ռուբեն Մխիթարյանը: Նիկոլի համար կարմիր գծեր չկան, նա պատրաստ է ամեն ինչի՝ Ադրբեջանին եւ Թուրքիային հաճոյանալու համար: Որոշել են հայկական անմոռուկը՝ ցեղասպանության խորհրդանիշը, ճանաչել ծայրահեղության սիմվոլ եւ արգելել: Թուրք եւ ադրբեջանցի օգտատերերն ուրախությամբ շնորհավորում են միմյանց: Ո՞վ կմտածեր, որ երբեւէ սեփական երկրում կարգելվի որպես ողբերգության հիշեցում մեր մխիթարանք խորհրդանիշը: Գրող, բանաստեղծ, հրապարակախոս Աշոտ Միրզոյանը փորձում է իր ձայնը լսելի դարձնել՝ «Դավաճանն անվերադարձ կորած է ազգի ու երկրի համար: Նրան միայն պիտի չեզոքացնես, տեղանքն էլ ախտահանես, որովհետեւ նա ամենավատ, թունավոր մոլախոտն է, որը դուրս է պրծել ազգի արգանդից»:

Ապրիլի 24-ին հայությունը խոր սգով հիշեց իր պատմության չարյաց մեծագույնը՝ եղեռնը: Հաջորդ իսկ օրը մեծագույն խանդավառությամբ, զուռնա-դհոլով, խորոված-քյաբաբով ՔՊ-ականները նշեցին Քաղաքացու օրը, այն քաղաքացու, որը «շուն ու շանգյալ» է, եթե իր ձայնը իրենց չի տալիս: Մարդն իր անմիջական ծնողից զատ ունի նաեւ մեկ այլ ծնող՝ Հայրենիքը: ՔՊ առաջնորդի ձեռնարկած քեֆ-ուրախությունը նույնն է, թե ծնողի հուղարկավորության հաջորդ օրն իսկ հայտարարես տոնախմբություն: Կապիտուլյանտը ջանք ու եռանդ չի խնայում՝ ոտնատակ տալու ազգային սրբությունները, որպեսզի պետական բյուջեն դատարկի յուրայիններին համար, մի գերագույն նպատակով՝ հանուն իր ապահով վերարտադրության: Իսկ դրան հասնելու ուղիղ ճանապարհը նա տեսնում է «կաթի սերը քաշելու» գործընթացի հաջողությունում: Բայց կասե՞ք՝ ո՞ւմ է երբեւէ հաջողվել տեսնել սեփական ծոծրակը: Այս վճռորոշ օրերին իմ հույսը ես կապում եմ «Ուժեղ Հայաստանի» ու նրա ուժեղ, կամային առաջնորդ Սամվել Կարապետյանի հետ»:



ԿՅՈՒՐ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԱՇԱԿԵՐՏԸ

20-րդ դարի հայ նշանավոր հայագետ, Մխիթարյան միաբանության ավագ սերնդի անդամ Ներսես Տեր-Ներսեսյան արքեպիսկոպոսը, աշխարհիկ անունով՝ Արտաշես Տեր-Ներսեսյան, եկեղեցական բարձրաստիճան գործիչ էր, մանկավարժ, հայագետ: Հայ կաթոլիկ եկեղեցու՝ Հայաստանի համայնքի առաջին ղեկավարը ծնվել էր Բեռլինում, 1920-ին: Հայրը՝ Տեր Բաբկենը, եւ մեծ հայրը՝ Տեր Ներսեսը, եղել են Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու քահանաներ: 2 տարեկանում կորցրել է մորը, նրան տարել են Ռումինիա՝ հանձնել մեծ հոր խնամքին: Նախնական կրթությունը ստացել է Բուխարեստի Միսաքյան վարժարանում՝ 1926-1931 թթ., որտեղ ապագա հոգեւորականի ուսուցիչը Լեւոն-Կարապետ Պալճյանն էր՝ ապագա Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը:

Երջանկահիշատակ Վազգեն Ա-ն տասնամյակներ անց էլ Հ. Ներսեսին համարում էր իր սիրելի աշակերտը: Հետո ուսանել է Սոֆիայի Մեսրոպյան վարժարանում, 1933-ին ուսանելու է մեկնել Սբ Ղազարի Մխիթարյան վարժարան: 1939-ին, վեցամյա կրթությունից հետո, մտնել է վանք եւ դարձել Մխիթարյան միաբանության անդամ, 1940-ին ձեռնադրվել է, ստանալով մեծ հոր՝ Տ. Ներսեսի անունը: Նվիրվել է գիտամանկավարժական եւ խմբագրական գործունեությանը՝ Սբ Ղազարի եւ Մուրադ-Ռաֆայելյանի սաների համար մնալով որպես «Հայր վարժապետ»: Դասավանդել է գրաբար, արեւմտահայերեն, փիլիսոփայության պատմություն, Հայ հին գրականություն, հունական եւ լատինական գրականությունների պատմություն, եկեղեցական երաժշտություն: 1948-52 թթ. խմբագրել է «Մխիթարյան ընտանիք» ամսաթերթը, ապա՝ «Բազմավեպը»: Այդ տարիներին մի քանի հարյուր հոդված է հրատարակել ամսագրում՝ նվիրված Մխիթարյան միաբանության, սփյուռքի եւ Հայաստանի գիտամշակութային կյանքին ու տարբեր իրադարձությունների, թարգմանություններ՝ եվրոպական լեզուներից, փոխադրություններ՝ գրաբարից եւ այլն:

1964-76 թթ. դարձել է Մխիթարյան միաբանության ընդհանուր քարտուղարը, որից հետո Սբ Ղազարի ձեռագրատան պատասխանատուն: Իսկ 1991 թ. Հովհաննես-Պողոս Բ պապի կողմից նշանակվել է Հայաստանի, Վրաստանի ու Արեւելյան Եվրոպայի կաթողիկե առաջնորդ: 1992-ին Պապի կողմից օծվել է տիտղոսավոր արքեպիսկոպոս՝ առաջնորդական Աթոռը Գյումրիում: 2005 թ.՝ 75 տարեկանում, առաջնորդի պաշտոնից հրաժարական է ներկայացրել Պապին: Կարճատեւ հիվանդությունից հետո մահացել է 2006 թ. դեկտեմբերի 24-ին, Աշոցքի իտալական հիվանդանոցում: Թաղվել է Փանիկում:



Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԻՆՉ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՄ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՊ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ

Զրծագանքելով «Հրապարակի» խմբագիր Արմինե Օհանյանի հոդվածին՝ փորձեմ մի քանի դիտարկում անել հունիսի 7-ի ընտրությունների մասին: Ի սկզբանե ասեմ, որ առաջադրված 19 ուժերի մեջ կան այնպիսիք, որոնց մասին նույնիսկ չէի էլ լսել կամ վերջին շաբաթներին եմ տեղեկացել եւ դեռ վերջնական որոշում չունեմ, թե որ ուժին եմ տալու քվես: Ընդհանրապես, այն կարծիքին եմ, որ քաղաքական ընտրություններում շատ բան որոշվում է հենց ընտրության օրը՝ քվեախցում: Եվ դրա պատճառով է նաեւ, որ ընտրությունները, որպես երեւույթ, ֆենոմեն, մեզ մոտ անկանխատեսելի են, ու ո՛չ սոցհարցումները, ո՛չ տարբեր միջոցառումները չեն կարող երաշխիք լինել, թե ով ինչքան քվե կստանա:

Հայաստանյան մենթալիտետը հաշվի առնելով կարելի է ասել, որ շատ բան կախված է անձերից, թե ովքեր են այս կամ այն ուժի թեկնածուները, ովքեր են ղեկավարում այդ ուժերին, եւ նրանք, ինչպես կասեր ժողովուրդը՝ «ինչ ունեն արած եւ ապրած»:

Սկսեմ ՔՊ-ից: Առանձնապես հիացած չեմ այն քաղաքական գծից, որն առաջ է տանում այս պահին գործող քաղաքական մեծամասնությունը, ուստի դժվար թե ՔՊ-ին քվե տամ: Առհասարակ, ես դեմ եմ հեղափոխություններին, եթե դրանք գիտատեխնիկական կամ ինտելեկտուալ բովանդակություն չունեն եւ չեն ծառայելու մարդկության բարօրությանը: Բացի այդ, ինձ համար անհասկանալի են Նիկոլ Փաշինյանի ու նրա կաբինետի արտաքին քաղաքական, ներքաղաքական կուրսը, կրոնա-եկեղեցական քաղաքական գիծը: Ես այն մարդկանցից չեմ, ովքեր առաջնորդվում են հանրային-քաղաքական դիսկուրսում շրջանառվող թեզիսներով՝ վիրավորական էպիտետներից մինչեւ «հներ-նորեր», «նախկիններ-ներկաներ» տիրույթ: Ինձ համար անձամբ՝ բոլորն էլ, մեծ հաշվով, եւ մի քիչ հին են ու նախկին, մի քիչ նոր ու ժամանակակից: Ինձ նաեւ անհասկանալի է, թե, ի վերջո, ինչ գաղափարախոսության է դավանում ՔՊ-ն՝ լիբերալ-դեմոկրա՞տ են, նեոլիբերա՞լ, թե՞...: Հենց այն, որ ՔՊ-ն, ըստ Նիկոլ Փաշինյանի հայտարարության, որեւէ «իզմ»-ի դավանորդ չէ, արդեն վերապահման պատճառ է, որովհետեւ գաղափարախոսություն չունեցող կուսակցությունը, մեծ հաշվով, շահերի փոխհամընկնմամբ միավորված մարդկանց խումբ է՝ ոչ ավելին, որը պարզապես ձգտել ու հասել է իշխանության եւ փորձում է համատեղել կառավարումն ու սեփական/խմբային շահերի սպասարկումը: Խոսքը քաղաքագիտական ընդունված չափանիշների հիման վրա ֆիքսված գաղափարախոսության մասին է՝ սոցիալիզմ, կոմունիզմ, լիբերալիզմ, լիբերալ-դեմոկրատականություն, կոնսերվատիզմ, նացիոնալ-կոնսերվատիզմ եւ այլն:

Ես՝ որպես անհատ, ունենալով քաղաքական որոշակի համոզմունքներ, այս կամ այն քաղաքական ուժին ձայն պետք է տամ՝ իմանալով նրանց գաղափարախոսությունների ուղղվածությունը, տարբերությունը, եւ թե դրանք որքանով են համատեղելի իմ համոզմունքների հետ: Սա վերաբերում է ընտրություններին մասնակցող բոլոր 19 ուժերին: Ինչ վերաբերում է ՔՊ-ի արտաքին քաղաքական կուրսին կամ աշխարհաքաղաքական ընտրությանը, հարցն այն չէ, թե ես ռուսամետ եմ կամ արեւմտամետ: Այս առումով համամիտ եմ ուկրաինացի հայտնի մեկնաբան Դմիտրի Գորդոնի հետ՝ հետխորհրդային տարածքում իսկական/զուլալ արեւմտամետ չկա, «ամենաթույն» արմեւմտամետները բուծվում են ռուսական հատուկ ծառայությունների կողմից: Արեւմուտքն ինձ համար առաջին հերթին օրինականություն է եւ իրավունք, իրավունքի եւ պարտականության հստակ ամրագրվածություն, արեւմտյան դասական արվեստ ու մշակույթ: Սակայն Արեւելքն էլ իր հմայնքն ու գրավչությունն ունի ինձ համար՝ Ռուսաստանից մինչեւ Չինաստան ու արաբական միապետություններ կամ Կենտրոնական Ասիա: Վերապահություն ունեմ «ո՛չ միս, ո՛չ ձուկ» վիճակի հետ կապված, որն աշխարհաքաղաքական ընտրության առումով առաջ է տանում Նիկոլ Փաշինյանը: Նման բան, որ միանգամից երկու աթոռի վրա նստես, չի լինում, եւ կյանքը ցույց է տվել, որ դա անել փորձողներն ի վերջո զրկվում են երկու աթոռից էլ: Դա վտանգավոր եւ արկածախնդրություն պարունակող մոտեցում է:

Եվ ինձ համար ընդունելի չէ եկեղեցական բարենորոգության այն մեթոդիկան, որը փորձում է առաջ մղել Նիկոլ Փաշինյանը: Այո, հասկանալի է, ու բոլորս գիտենք, որ առաքելական եկեղեցին ունի բարենորոգման կարիք, որովհետեւ եկեղեցիները՝ որպես կենդանի օրգանիզմներ, ժամանակ առ ժամանակ պետք է թարմանան ու ժամանակի հետ համաքայլ ընթանան: Խոսքս հավատքային հավիտենական ճշմարտություններին, դոգմատիկ կամ դոկտրինալ-հայեցակարգային հարցերին չի վերաբերում, այլ, այսպես ասած, հովվական պրակտիկային, հոգեւորականների անձնային բարեվարքությանը, ֆինանսական թափանցիկությանը եւ այլն: Սակայն բարենորոգումը պետք է սկսել՝ պահպանելով ընդունված ընթացակարգերը, որոնք առկա են առաքելական եկեղեցում, եւ դա պետք է անի նման հարցերի վճռման միակ իրավասու եկեղեցական մարմինը՝ Ազգային-եկեղեցական ժողովը, որտեղ էլ պետք է կայացվեն որոշումները: Այս դեպքում արմատականությունը՝ ռադիկալիզմն ընդունելի չէ, առաջնային կարեւորություն ունի էվոլյուցիան եւ ոչ թե ռեւոլյուցիան: Հատկապես, որ ունենք պատմական նախադեպ՝ Հռոմի կաթոլիկ եկեղեցու եւ Իտալիա պետության հարաբերությունների հետ կապված՝ ի դեմս Լաթերանյան համաձայնագրերի եւ դրանց հետ կապված զարգացումների: Եվ դա կարող է լավագույն օրինակ ծառայել Հայաստանի պարագայում: Գուցե մի փոքր շատ երկարաշունչ ստացվեց, բայց այս տեսակետն էլ գոյության իրավունք ունի, կարծում եմ:

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 29.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՅԱՆԻ ԻՄԱՍՏԸ Ո՞ՐՆ Է, ՈՐ ՏԵՍԱԽՑԻԿ ԴՆԵՆՔ ԷԴ ՉԿԱՅԱՑԱԾ ՇՏԱԲԻ ԴԻՄԱՑ

Ստեր տեղեկություններով՝ Թալինում «Ուժեղ Հայաստան» կուսակցության գրասենյակի բացումից հետո իշխանությունը գրասենյակի դիմաց տեսախցիկ է տեղադրել, հետեւում է, թե ովքեր են ելումուտ անում այդտեղ: Թալինցիները մեզ պատմեցին, որ քաղաքի մուտքերի մոտ դեռ տարիներ առաջ են տեսախցիկներ տեղադրել, բայց «Ուժեղ Հայաստան» եւ «Ապրելու երկիր» կուսակցությունների գրասենյակների մոտ տեսախցիկները տեղադրվել են այդ գրասենյակների բացումից հետո:

Տեղեկացանք, որ Թալինի համայնքապետարանի էլեկտրիկ Անդոկ Ղանդիլյանին աշխատանքից ազատել են այն բանի համար, որ մտել է «Ուժեղ Հայաստան» կուսակցության գրասենյակ: Նույն գրասենյակ մտնելու համար էլեկտրացանցի մի աշխատակցի էլ են ազատել աշխատանքից: Տավրոս Սափեյանը համայնքապետարանի իրավաբան Էդգար Խաչատրյանին տեղափոխել է ՀԷՑ-ի Թալինի մասնաճյուղի տնօրենի պաշտոնին, որ ցանցերի աշխատակիցներին վերահսկի: Նա էլ սկսել է աշխատանքից ազատել աշխատակիցներին:

Թալինի քաղաքապետ **Տավրոս Սափեյանին** հարցրինք, թե ինչու են տեսախցիկ տեղադրել «Ուժեղ Հայաստան» կուսակցության գրասենյակի դիմաց: «Թալին քաղաքում եւ վարչական տարածքների մուտքերը, ամբողջը տեսախցիկներ են դրված, անվտանգություն, խուժանություն եւ այլն, այդ նպատակով: Ոչ մի «Ապրելու երկիր», «Ուժեղ Հայաստան» կուսակցություն մեր տեսադաշտում չկա: Այդ տեսախցիկը կա ճանապարհի վրա, ես ի՞նչ անեմ, որ ինքն էդտեղ շտաբ է բացել: Շտաբը, եթե օրենքով է պահում իրեն, տեսախցիկը կապ չունի, մարդն էլ եթե օրենքով է իրեն պահում, տեսախցիկը կապ չունի: Ինչ վերաբերում է Անդոկի հետ կապված, ինքն իմ թալինցին է, դա եղել է ամիսներ առաջ՝ իր սխալ եւ վատ աշխատանքի հետեւանքով, ինչքան որ ես գիտեմ, ես տեղեկացված չեմ, էլեկտրացանցը հեռացրել է իրեն աշխատանքից: Հիմա բերել կպցնել քաղաքական աստառ ու սենց որակել՝ ազատում: Նախ, համայնքապետարանից որեւիցե մի աշխատող էդ չկայացած շտաբը չի մտնում, հելնում: Մենք դրան ուշադրություն չենք էլ դարձնում: Իրականից ես լուրջ բան եմ ասում՝ ուշադրություն չենք դարձնում: Ամպագոռգոռ չինչի, եթե մեղվի փեթակը հանգում ա, տերը էդ մեղվի փեթակին էլ տեր չի կանգնում, նույնն էլ այդ շտաբն է, ամբողջ հանրությունն էլ գիտի, որ հանգած է, թալինցին էլ գիտի, մենք էլ գիտենք, յանի իմաստը ո՞րն է, որ մենք տեսախցիկ դնենք, երանգավորումներ տանք, ով որ մտնում է այդ շտաբ, դուրս է գալիս, ազատենք աշխատանքից: Չկա նման բան»:

Իսկ այդ վայրում տեսախցիկը ե՞րբ է տեղադրվել: «4 տարի առաջ, իմ կառավարման ժամանակ, երբ որ ես եղել եմ համայնքի ղեկավար, կենտրոնական փողոցներում եմ տեղադրել: Ես ունեմ մրցույթներ, որ ամեն ամիս շատացնում եմ տեսախցիկները՝ ի բարօրություն թալինցու, մեր երկրում կարգուկանոն պե՞տք է հաստատվի: Չեմ ուզում այլ դաշտ մտնել, էդ ասող-խոսողները, ով ինֆորմացիան տվել է, նոր բան չէ, վստահեցնում եմ, որ իրենց հետ կապող երակ էլ չկա, որ ես նայեմ կամ դիտեմ, կամ ուժային պատկան մարմինները դիտեն»:

Լավ, իսկ կասե՞ք՝ համայնքում քանի տեսախցիկ եք տեղադրել, եւ դա որքան է նստել համայնքի բյուջեի վրա: «Այս պահին չեմ հիշում, մենք ուրիշ տեղից գումարներ չունենք, մեծահարուստ չենք, Ծառուկյան Գագոն չենք, Սամվել Կարապետյանը չենք, մենք մեր ժողովրդի գումարով կառուցում ենք մեր համայնքը եւ համայնքի համար լավ գործեր ենք անում»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am